

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ալավերդի քաղաքային համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Շամլուղ քաղաքային համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Հաղպատ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Քարինջ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով թունանյան քաղաքային համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Օձուն գյուղական համայնքին, արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Աքորի գյուղական համայնքին:

ԱԼԱՎԵՐԴԻ-ՇԱՄԼՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Ալավերդի, Շամլուղ քաղաքային և Աքորի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 1 սահմանակետով անցնում է 699մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևելք, անտառի եզրով, թիվ 3-11 սահմանակետերով անցնում է 2291մ, հասնում ջրբաժանի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 312մ, հասնում թիվ 13 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևելք, թիվ 14 սահմանակետով, անցնում 825մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 16-22 սահմանակետերով անցնելով 1428մ, հասնում ջրբաժանի թիվ 23 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրագծով, թիվ 24-30 սահմանակետերով անցնելով 1041մ, հասնում է 31 սահմանակետին, որից հետո սահմանագիծը անտառի բացատով, թիվ 32-39 սահմանակետերով անցնելով 908մ, հասնում է ջրբաժանի թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 68մ, հասնում թիվ 41 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք և անտառի եզրագծով ջրբաժանի թիվ 42-44 սահմանակետերով անցնում է 573մ, հասնում թիվ 45 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 46 սահմանակետով անցնում 482մ, հասնում ավտոճանապարհի եզրի թիվ 47

սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ջրհավաքով, ապա շրջանցելով ջրհավաքը, թիվ 48-51 սահմանակետերով անցնելով 1098մ, հասնում է 52 սահմանակետին: Թիվ 52 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 53-57 սահմանակետերով անցնում 814մ, հասնում թիվ 58 սահմանակետին, որտեղից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 59-62 սահմանակետերով անցնում է 504մ, հասնում թիվ 63 սահմանակետին: Թիվ 63 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 64-67 սահմանակետերով անցնում 616մ, հասնում թիվ 68 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 153մ, հասնում ջրբաժանի թիվ 69 սահմանակետին: Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 571մ, հասնում թիվ 70 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 225մ, հասնում թիվ 71 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 72 սահմանակետով անցնում 534մ, հասնում թիվ 73 սահմանակետին, հետո թեքվում է հարավ, հատելով դաշտային ճանապարհը, անցնում 313մ, հասնում ջրբաժանի թիվ 74 սահմանակետին: Թիվ 74 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 75 սահմանակետով անցնում 819մ, հասնում թիվ 76 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 77-79 սահմանակետերով անցնելով 1335մ, հասնում է Ալավերդի, Շամլուղ քաղաքային և Հաղպատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի երկարությունը 15609մ է:

ԱԼԱՎԵՐԴԻ-ՀԱՂՊԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»

Ալավերդի, Շամլուղ քաղաքային և Հաղպատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրհավաքով, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 2005մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք, ձորով, թիվ 7 սահմանակետով անցնում 1515մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, ջրբաժանով, թիվ 9 սահմանակետով անցնում 1407մ, հասնում գագաթի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ, հատելով ճանապարհը, ժայռի և դամբարանադաշտի եզրով, թիվ 11-16 սահմանակետերով անցնում 2429մ, հասնում թիվ 17 սահմանակետին, որը գտնվում է Դեբեդ գետի ափին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս, անցնում 265մ,

հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, 19-25 սահմանակետերով շրջանցելով գերեզմանոցի եզրագիծը, դամբարանադաշտի եզրով և անտառի եզրով անցնում է 1442մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ, լանջով, անտառի եզրով, թիվ 27-30 սահմանակետերով անցնում 729 մ, հասնում գետակի եզրի թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը անտառի միջով, գետակով թեքվում է հարավ, թիվ 32-74 սահմանակետերով անցնում 5834մ, հասնում Ալավերդի քաղաքային, Հաղպատ և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15634մ է:

ԱԼԱՎԵՐԴԻ-ՔԱՐԻՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Ալավերդի քաղաքային, Քարինջ և Հաղպատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը անտառի միջով, ձորակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1319մ, հասնում թիվ 6 սահմանակետին, թիվ 6 սահմանակետից թեքվում դեպի արևմուտք և հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 1508մ, հասնում Ալավերդի, Թումանյան քաղաքային և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2827մ է:

ԱԼԱՎԵՐԴԻ-ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Ալավերդի, Թումանյան քաղաքային և Օձուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 484մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 629մ, հասնում Ալավերդի, Թումանյան քաղաքային և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1114մ է:

ԱԼԱՎԵՐԴԻ-ՕԶՈՒՆ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Ալավերդի քաղաքային, Աքորի և Օձուն գյուղական համայնքների տարածքների բաժանման Դեբետ գետի վտակի ձախ ափին գտնվող «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 279 մ, հասնում 1027.4մ նիշ ունեցող բլրի թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Օձուն գնացող ավտոճանապարհը, անցնում 469մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը նշված ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 3-15 սահմանակետերով անցնելով 1742մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով երկաթգիծը, Դեբեդ գետը, գերեզմանոցի եզրագծով անցնում է 303մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 18-21 սահմանակետերով, գերեզմանոցի եզրով անցնում է 1228մ, հասնում թիվ 22 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, ապա հյուսիս, 23-31 սահմանակետերով, անտառի եզրով, ջրբաժանով անցնում 1465մ, հասնում թիվ 32 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, թիվ 32-36 սահմանակետերով անցնում 689մ, հասնում Դեբեդ գետի ափին գտնվող թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 38-39 սահմանակետերով անցնում 1334մ, հասնում թիվ 40 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում է դեպի արևելք, անցնում 544մ, հասնում բլրի գագաթի 1139.4մ նիշ ունեցող թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 392մ, հասնում թիվ 42 սահմանակետին, այնուհետև նույն ուղղությամբ անցնում է 382մ, հասնում թիվ 43 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, ջրահավաքով անցնում 249մ, հասնում թիվ 44 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում նույն ջրահավաքով, թիվ 45 սահմանակետով 363մ, հասնում թիվ 46 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անտառի եզրագծով, թիվ 47-53 սահմանակետերով անցնում 1210 մ, հասնում թիվ 54 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 55 սահմանակետով, ջրբաժանով անցնում 661մ, հասնում 1497,9մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 56 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով նույն ուղղությամբ թիվ 57 սահմանակետով անցնում է 969մ, հասնում թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 59-64 սահմանակետերով, անտառի եզրով անցնում 2152 մ, հասնում թիվ 65 սահմանակետին:

Թիվ 65 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 66-67 սահմանակետերով անցնում 1121մ, հասնում 1754,4մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 68 սահմանակետին, այնուհետև բլրի գագաթից ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, անտառի եզրով, ջրբաժանով, թիվ 69 սահմանակետով անցնում 933մ, հասնում Ալավերդի, Թումանյան քաղաքային և Օձուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16485մ է:

ԱԼԱՎԵՐԴԻ-ԱՔՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Զ»-«Ա»

Ալավերդի, Շամլուղ քաղաքային և Աքրի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 963մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 242 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 3 սահմանակետով, ջրհավաքով անցնում 232մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5-11 սահմանակետերով անցնում 3328մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այնուհետև ջրհավաքով թեքվում է դեպի հարավ, թիվ 13 սահմանակետով անցնում 725մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 15-16 սահմանակետերով անցնում 700մ, հասնում ձորակի թիվ 17սահմանակետին, այնուհետև ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 18-21 սահմանակետերով անցնում 1114մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում ճանապարհի եզրի թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը ավտոճանապարհով անցնում է 179մ, հասնում 23 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 376մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 539մ, հասնում թիվ 25 սահմանակետին, որից թեքվում է դեպի հարավ, անցնում 223մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 26 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողի եզրով անցնելով 246մ, հասնում ջրբաժանի թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրբաժանի թիվ 28-31 սահմանակետերով անցնելով 853մ, հասնում 1412.2մ նիշ ունեցող Դարկ բարձունքի թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ճանապարհի եզրով, ջրբաժանով, թիվ 33

սահմանակետով անցնելով 584մ, հասնում թիվ 34 սահմանակետին, որից հետո թիվ 35-37 սահմանակետերով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 1133 մ, հասնում ջրբաժանի թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 315մ, հասնում թիվ 39 սահմանակետին, որից կտրուկ թեքվելով դեպի հյուսիս-արևմուտք, անցնելով 306մ, հասնում թիվ 40 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, շրջանցելով քաղաքի եզրագիծը, անցնում 427մ, հասնում բլրի գագաթի թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողի եզրով անցնելով 526մ, հասնում ժայռի եզրի թիվ 42 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, վարելահողի և Ալավերդի քաղաքի եզրագծով, թիվ 43-44 սահմանակետերով անցնելով 517 մ, հասնում թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Սանահին-Ալավերդի ճանապարհին զուգահեռ, դրանից 20մ հեռավորության վրա գտնվող հյուսիսային փլվածքի եզրագծով, թիվ 46 սահմանակետով անցնելով 816մ, հասնում է թիվ 47 սահմանակետին, որտեղից սահմանագիծը Սանահին կայարանի բնակելի թաղամասի եզրագծով, թիվ 48-54 սահմանակետերով անցնում է 1805մ, հասնում Ալավերդի քաղաքային, Աքորի և Օծուն գյուղական համայնքների տարածքների բաժանման, Դեբեդ գետի վտակի ափին գտնվող «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16149մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՍԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ախթալա քաղաքային համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Մեծ Այրում գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Նեղոց գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Շամլուղ քաղաքային համայնքին, հյուսիս-արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ ճոճկան գյուղական համայնքին:

ԱԽԱԹԱԼԱ - ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Ախթալա քաղաքային, Մեծ Այրում և ճոճկան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 365մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից սահմանագիծը շարունակվելով նույն ուղղությամբ, հատելով Ախթալա - Փոքր Այրում ավտոճանապարհը, թիվ 3-6 սահմանակետերով անցնում է 2174մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 1294մ, հասնում ձորի մեջ գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ձորով՝ թիվ 9-30 սահմանակետերով անցնում 4635մ, հասնում թիվ 31 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1038մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 968մ, հասնում թիվ 33 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 849մ, հասնում է թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 184մ, հասնում թիվ 35 սահմանակետին, որից հետո թեքվում դեպի հարավ-արևելք, անցնում 377մ, հատում Ախթալա-Փոքր Այրում ավտոճանապարհը և քաղաքի եզրագծով հասնում թիվ 36 սահմանակետին, որից հետո դարձյալ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 127մ, հասնում ճանապարհի և ձորակի հատման թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը նշված ձորակով, թիվ 38-41 սահմանակետերով անցնելով 673մ, հասնում է թիվ 42 սահմանակետին, որից հետո

թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 241մ, պահածոների գործարանի եզրագծով հատելով երկաթգիծը, հասնում Դեբեդ գետի ձախ ավին գտնվող Ախթալա քաղաքային, Մեծ Այրում և Նեղոց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12925մ է:

ԱԽԹԱԼԱ - ՆԵՂՈՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Ախթալա, Շամլուխ քաղաքային և Նեղոց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով, ք. Ախթալայի բնակավայրի եզրով անցնում 1434մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 5-6 սահմանակետերով, անտառի եզրագծով անցնում 736մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 8-15 սահմանակետերով, Դեբեդ գետի հոսանքի ուղղությամբ անցնում 1634մ, հասնում թիվ 16 սահմանակետին, այնուհետև դարձյալ հյուսիսարևելյան ուղղությամբ թիվ 17-19 սահմանակետերով անցնում է 972մ, հասնում Ախթալա քաղաքային, Նեղոց և Մեծ Այրում գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4776մ է:

ԱԽԹԱԼԱ – ՇԱՄԼՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Ախթալա, Շամլուղ քաղաքային և ճոճկան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրագծով անցնում է 1308մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անտառի եզրագծով, թիվ 2-5 սահմանակետերով անցնում է 1400մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 772մ, հասնում ջրբաժանի թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորով, թիվ 10 սահմանակետով անցնում 612մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 147մ, հասնում անտառի եզրի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով, թիվ 13-24 սահմանակետերով անցնում է 3070մ, հասնում թիվ 25

սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 417մ, հասնում թիվ 26 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 171մ, հասնում ջրբաժանի թիվ 27 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս, ջրբաժանով անցնում 146մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 150մ, հասնում ջրբաժանի թիվ 29 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, հատելով Շամլուղ գնացող ավտոճանապարհը, Ախթալա քաղաքի եզրագծով անցնելով 540մ, հասնում է ջրհավաքի թիվ 30 սահմանակետին, որտեղից ջրհավաքով թեքվում է հարավ-արևելք, անցնում 406մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 32 սահմանակետով անցնում 447մ, հասնում Ախթալա, Շամլուղ քաղաքային և Նեղոց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9586մ է:

ԱԽԹԱԼԱ - ԳՈՃԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Ախթալա քաղաքային, Մեծ Այրում և Գոճկան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառային հողերով, 1-2 սահմանակետերով անցնում է 3724մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում է 683մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 763մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 233մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անտառի եզրագծով, թիվ 11-16 սահմանակետերով անցնում է 604մ, հասնում Ախթալա, Շամլուղ քաղաքային և Գոճկան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6007մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Թումանյան քաղաքային համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա» - «Բ» հատվածով սահմանակից է Ալավերդի քաղաքային համայնքին, «Բ» - «Գ» հատվածով՝ Քարինջ գյուղական համայնքին, հարավից «Գ» - «Դ» հատվածով՝ Դսեղ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ» - «Ե» հատվածով՝ Ծաթեր գյուղական համայնքին, «Ե»-«Զ» հատվածով՝ Այգեհատ գյուղական համայնքին, հյուսիսից «Զ» - «Ա» հատվածով՝ Օձուն գյուղական համայնքին:

ԹՈՒՄԱՆՅԱՆ - ԱԼԱՎԵՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Թումանյան, Ալավերդի քաղաքային և Օձուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 484մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 629մ, հասնում Թումանյան, Ալավերդի քաղաքային և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1114մ է:

ԹՈՒՄԱՆՅԱՆ – ՔԱՐԻՆՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Թումանյան, Ալավերդի քաղաքային և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 81մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1475մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնում 1363մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 442մ, հասնում ջրբաժանի 1736,0մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 8 սահմանակետին,

թիվ 8 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 319մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 11-24 սահմանակետերով անցնում 2402մ, հասնում թիվ 25 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 236մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 446մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում վարելահողի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ճանապարհը, անցնելով 703մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 28 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, խոտհարքի եզրով հատելով ճանապարհը, անցնում 135մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 511մ, հասնում Մարց գետի ափին գտնվող Թումանյան քաղաքային, Քարինջ և Դսեղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8113մ է:

ԹՈՒՄԱՆՅԱՆ – ԴՍԵՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Թումանյան քաղաքային, Դսեղ և Ծաթեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, շրջանցելով Սարի թաղ կոչվող թաղամասը, թիվ 1-13 սահմանակետերով անցնելով 510մ, հասնում Մարց գետի ափին գտնվող թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, Մարց գետով, թիվ 15-24 սահմանակետերով անցնելով 1223մ, հասնում Մարց գետի ափին գտնվող Թումանյան քաղաքային, Քարինջ և Դսեղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1733մ է:

ԹՈՒՄԱՆՅԱՆ – ԾԱԹԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Թումանյան քաղաքային, Ծաթեր և Այգեհատ գյուղական համայնքների տարածքների բաժանման երկաթգծի եզրին գտնվող «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 106մ, հասնում Դեբեդ գետի ափին գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև Դեբեդ գետով թեքվում է դեպի հարավ,

թիվ 2-14 սահմանակետերով անցնելով 1860մ, հասնում Դեբեդ գետի ափին գտնվող Թումանյան քաղաքային, Դսեղ և Ծաթեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» -«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1966մ է:

ԹՈՒՄԱՆՅԱՆ – ԱՅԳԵՐԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե» - «Զ»

Թումանյան քաղաքային, Օձուն և Այգեհատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 3240մ, հասնում 1181,4մ նիշ ունեցող թիվ 2 սահմանակետին, որտեղից անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում 733մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, բացատի եզրով, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 785մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 212մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս, անցնում 153մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից սահմանագիծը ջրբաժանով, անտառի եզրով, թիվ 11-12 սահմանակետերով անցնում 594մ, հասնում 1194,7մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով, անտառի եզրով, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 908մ, հասնում 1125,7մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 17 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 18 սահմանակետով անցնում 505մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը Դեբեդ գետին զուգահեռ թեքվում է հյուսիս, թիվ 20-22 սահմանակետերով անցնում 568մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 60մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 68մ, հասնում երկաթգծի եզրին գտնվող թիվ 25 սահմանակետին: Այնուհետև սահմանագիծը երկաթգծով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 26-39 սահմանակետերով անցնում 2261մ, շրջանցելով Քոբեր կայարանը, հասնում Թումանյան քաղաքային, Այգեհատ և Ծաթեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» -«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10087մ է:

ԹՈՒՄԱՆՅԱՆ – ՕՁՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ» - «Ա»

Թումանյան, Ալավերդի քաղաքային և Օձուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 492մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից ձորով անցնում է նույն ուղղությամբ, թիվ 2-15 սահմանակետերով անցնում 1188մ, հասնում Թումանյան քաղաքային, Օձուն և Այգեհատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ» -«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1680մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շամլուղ քաղաքային համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Շամլուղ քաղաքային համայնքը հյուսիսից «Ա»- «Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Վրաստանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ ճոճկան գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Ախթալա քաղաքային համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Նեղոց գյուղական համայնքին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Հաղպատ գյուղական համայնքին, հարավից և հարավ-արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Ալավերդի քաղաքային համայնքին, արևմուտքից և հյուսիս-արևմուտքից «Է»-«Ա» հատվածով՝ Ջիլիզա գյուղական համայնքին:

ՇԱՄԼՈՒՂ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության պետական սահմանի հետ:

ՇԱՄԼՈՒՂ – ՃՈՃԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Շամլուղ քաղաքային, ճոճկան գյուղական համայնքների և պետական սահմանի (Վրաստանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարավ, անցնելով անտառի միջով, Դեբետ գետի փոքր վտակի հոսանքին հակառակ ուղղությամբ թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1442մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ-արևելք, անտառի միջով բարձրանում բլրագագաթ, թիվ 6-8 սահմանակետերով անցնում է 1019մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որից հետո թիվ 9 սահմանակետից ջրբաժանով, թիվ 10 սահմանակետով անցնում 956մ, հասնում թիվ 11 սահմանակետին, թիվ 11 սահմանակետից ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 477մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ացնելով 70մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք: Թիվ 14 սահմանակետով անցնելով 177մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով 95 մ, հասնում 1302մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 16 սահմանակետին, որից նույն ուղղությամբ անցնում 183մ, հասնում ջրհավաքի թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 18-19 սահմանակետերով հատելով խճուղային ճանապարհը, ացնելով 193մ, հասնում Շամլուղ բնակավայրի վերջին` թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 21 սահմանակետով ացնում 437մ, ապա թեքվում հյուսիս, այնուհետև հարավ-արևելք, անտառի եզրագծով, թիվ 21-27 սահմանակետերով անցնում 916մ, հասնում թիվ 28 սահմանակետին, այնուհետև թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 272մ, հասնում թիվ 29 սահմանակետին, այնուհետև թիվ 29 սահմանակետից թեքվում դեպի հյուսիս-արևմուտք և հյուսիս, նույն անտառագծի եզրագծով, թիվ 30-35 սահմանակետերով անցնում 914մ, հասնում Շամլուղ, Ախթալա քաղաքային և ճոճկան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7148մ է:

ՇԱՄԼՈՒՂ – ԱԽԹԱԼԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ» - «Դ»

Շամլուղ, Ախթալա քաղաքային և ճոճկան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրագծով անցնում է 1308մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անտառի եզրագծով, թիվ 2-5 սահմանակետերով անցնում է 1400մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 772մ, հասնում ջրբաժանի թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորով, թիվ 10 սահմանակետով անցնում 612մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 147մ, հասնում անտառի եզրի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով, թիվ 13-24 սահմանակետերով անցնում է 3070մ, հասնում թիվ 25 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 417մ, հասնում թիվ 26

սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 171մ, հասնում ջրբաժանի թիվ 27 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս, ջրբաժանով անցնում 146մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 150մ, հասնում ջրբաժանի թիվ 29 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, հատելով Շամլուղ գնացող ավտոճանապարհը, Ախթալա քաղաքի եզրագծով անցնելով 540մ, հասնում է ջրհավաքի թիվ 30 սահմանակետին, որտեղից ջրհավաքով թեքվում է հարավ-արևելք, անցնում 406մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 32 սահմանակետով անցնում 447մ, հասնում Շամլուղ, Ախթալա քաղաքային և Նեղոց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9586մ է:

ՇԱՍԼՈՒՂ – ՆԵՂՈՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Դ» - «Ե»

Շամլուղ, Ախթալա քաղաքային և Նեղոց գյուղական համայնքների տարածքների բաժանման Դեբեդ գետի ափին գտնվող «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով, անտառի եզրով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 434մ, հասնում Շամլուղ քաղաքային, Նեղոց և Հաղպատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը` 434մ է:

ՇԱՍԼՈՒՂ – ՀԱՂՊԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե» - «Զ»

Շամլուղ քաղաքային, Հաղպատ և Նեղոց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անտառի եզրագծով անցնում 2404մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև անտառի եզրագծով, ժայռի եզրով թեքվում է հարավ, թիվ 2-14 սահմանակետերով անցնում 2122մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևմուտք, անցնում 111մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից անտառի միջով, ձորով, այնուհետև ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 17-45 սահմանակետերով անցնում 5971մ, հասնում թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է հարավ-արևելք, անտառի եզրագծի

ոլորաններով անցնում 3474մ, հասնում Շամլուղ, Ալավերդի քաղաքային և Հաղպատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14082մ է:

ՇԱՄԼՈՒՂ – ԱԼԱՎԵՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆ՝ «Զ» - «Ե»

Շամլուղ, Ալավերդի քաղաքային և Ջիլիզա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 1 սահմանակետով անցնում է 699մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևելք, անտառի եզրով, թիվ 3-11 սահմանակետերով անցնում է 2291մ, հասնում ջրբաժանի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 312մ, հասնում թիվ 13 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 825մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 16-22 սահմանակետերով անցնելով 1428մ, հասնում ջրբաժանի թիվ 23 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրագծով, թիվ 24-30 սահմանակետերով անցնելով 1041մ, հասնում է թիվ 31 սահմանակետին, որից հետո սահմանագիծը անտառի բացատով, թիվ 32-39 սահմանակետերով անցնելով 908մ, հասնում է ջրբաժանի թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցում 68մ, հասնում թիվ 41 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք և անտառի եզրագծով, ջրբաժանի թիվ 42-44 սահմանակետերով անցնում է 573մ, հասնում թիվ 45 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 46 սահմանակետով անցնում 482մ, հասնում ավտոճանապարհի եզրի թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ջրհավաքով, ապա շրջանցելով ջրհավաքը, թիվ 48-51 սահմանակետերով անցնելով 1098մ, հասնում է թիվ 52 սահմանակետին: Թիվ 52 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 53-57 սահմանակետերով անցնում է 814մ, հասնում թիվ 58 սահմանակետին, որտեղից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 59-62 սահմանակետերով անցնում է 504մ, հասնում թիվ 63 սահմանակետին: Թիվ 63 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 64-67 սահմանակետերով անցնում 616մ, հասնում թիվ 68 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 153մ, հասնում ջրբաժանի թիվ 69 սահմանակետին: Թիվ 69

սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 571մ, հասնում թիվ 70 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 225մ, հասնում թիվ 71 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 72 սահմանակետով անցնում 534մ, հասնում թիվ 73 սահմանակետին, հետո թեքվում է հարավ, հատելով դաշտային ճանապարհը, անցնում 313մ, հասնում ջրբաժանի թիվ 74 սահմանակետին: Թիվ 74 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 75 սահմանակետով անցնում 819մ, հասնում թիվ 76 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 77-79 սահմանակետերով անցնելով 1335մ, հասնում է Շամլուղ, Ալավերդի քաղաքային և Հաղպատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ» - «Է» սահմանագծի երկարությունը 15609մ է:

ՇԱՄԼՈՒՂ – ՋԻԼԻՉԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է» - «Ա»

Շամլուղ քաղաքային, Ջիլիզա գյուղական համայնքների և պետական սահմանի (Վրաստանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 103մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևելք, ապա արևմուտք և տեղանքի բարդ կտրվածքներով, անտառի եզրով, թիվ 2-19 սահմանակետերով անցնում 2533մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անտառի եզրով, թիվ 21-38 սահմանակետերով անցնում 5223մ, հասնում թիվ 39 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 40-41 սահմանակետերով անցնում 801մ, ջրբաժանով հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից ջրբաժանով նույն ուղղությամբ, թիվ 43-47 սահմանակետերով անցնում է 1548մ, հասնում է անտառի եզրի թիվ 48 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, նորից անտառի եզրով, թիվ 49-51 սահմանակետերով անցնում 1400մ, հասնում Շամլուղ քաղաքային, Ջիլիզա և Աքորի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11608մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Տաշիր քաղաքային համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սիխայելովկա, «Բ»-«Գ» հատվածով՝ Պետրովկա գյուղական համայնքներին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Մեղովկա և «Դ»-«Ե» հատվածով՝ Ուռուտ գյուղական համայնքներին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Սարատովկա, «Զ»-«Է» հատվածով՝ Նովոսելցովո և «Է»-«Ը» հատվածով՝ Կաթնառատ գյուղական համայնքներին, արևմուտքից և հյուսիսից «Ը»-«Ա» հատվածով՝ Մեծավան գյուղական համայնքին:

ՏԱՇԻՐ– ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Տաշիր քաղաքային, Մեծավան և Սիխայելովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառաշերտի եզրով անցնում 960մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով Տաշիր-Մեծավան միջհամայնքային ճանապարհը, անցնում 635մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառաշերտի եզրով, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 1686մ, հասնում ճանապարհի և Տաշիր գետի հատման տեղում գտնվող թիվ 5 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է հյուսիս-արևելք, ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 666մ, հատելով Սիխայելովկա գնացող ճանապարհը, հասնում Տաշիր քաղաքային, Սիխայելովկա և Պետրովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3947մ է:

ՏԱՇԻՐ – ՊԵՏՐՈՎԿԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Տաշիր քաղաքային, Պետրովկա և Միխայելովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 600մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 1340մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում է 393մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ջրբաժանով անցնում է 154մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 866մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 1079մ, հասնում է 1886.5մ նիշ ունեցող Սիսյատսկայա եռանկյունաչափական կետի հետ հանընկնող Տաշիր քաղաքային, Պետրովկա և Մեղովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4434մ է:

ՏԱՇԻՐ– ՄԵՂՈՎԿԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Տաշիր քաղաքային, Պետրովկա և Մեղովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 1360մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 572մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակը, թիվ 4 սահմանակետով անցնում 874մ, հասնում Մեղովկա-Տաշիր միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը Տաշիր գնացող նշված ճանապարհով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 1073մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 4291մ, հասնում Տաշիր քաղաքային, Մեղովկա և Ուռուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8169մ է:

ՏԱՇԻՐ– ՈՒՈՒՏ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Տաշիր քաղաքային, Մեղովկա և Ուռուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 403մ, հատելով Տաշիր գետի վտակը, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում 733մ, հասնում 1511.0մ նիշ ունեցող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում 708մ, հասնում խոտհարքի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 1063մ, հասնում թամբի վրա գտնվող Տաշիր քաղաքային, Ուռուտ և Սարատովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2907մ է:

ՏԱՇԻՐ – ՍԱՐԱՏՈՎԿԱ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Տաշիր քաղաքային, Սարատովկա և Նովոսելցովո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառաշերտի և վարելահողի եզրով, թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 1579մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևելք, վարելահողի և անտառաշերտի եզրով անցնում 453մ, հասնում Տաշիր գետի ափին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը Տաշիր գետով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 313մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում դեպի արևելք, անցնում 115մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 220մ, հատելով ճանապարհը, հասնում թիվ 7 սահմանակետին, այնուհետև հատում Տաշիր գետի վտակը, քարհանքի եզրագծով անցնելով 619մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, քարհանքի եզրագծով, դաշտային ճանապարհով անցնելով 359մ, հասնում Տաշիր-Ստեփանավան հանրապետական նշանակության ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը վերը նշված ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 272մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից շարունակվում է նույն ուղղությամբ, անտառաշերտի և արոտավայրի եզրով

անցնում 415մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 12 սահմանակետով անցնում 277մ, հասնում բլրի ստորոտի վրա գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 14-17 սահմանակետերով անցնում 1928մ, հասնում Տաշիր քաղաքային, Սարատովկա և Ուռուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6549մ է:

ՏԱՇԻՐ – ՆՈՎՈՍԵԼՑՈՎՈ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ե»

Տաշիր քաղաքային, Նովոսելցովո և Կաթնառատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, վարելահողի և անտառաշերտի եզրով անցնում 1848մ, հատելով Նովոսելցովո գնացող ճանապարհը, հասնում Տաշիր քաղաքային, Սարատովկա և Նովոսելցովո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1848մ է:

ՏԱՇԻՐ – ԿԱԹՆԱՌԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ը»

Տաշիր քաղաքային, Կաթնառատ և Մեծավան գյուղական համայնքների համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հարավ-արևմուտք, ապա նորից հարավ-արևելք, անցնում թիվ 1-3 սահմանակետերով 3606մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 1741մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնելով թիվ 6-16 սահմանակետերով 1955մ, հասնում է Տաշիր քաղաքային, Կաթնառատ և Նովոսելցովո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7302մ է:

ՏԱՀԻՐ – ՄԵԾԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Ա»

Տաշիր քաղաքային, Մեծավան և Միխայելովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով հատելով դաշտային ճանապարհը, Գյուլիբուլաղ գետակը, թիվ 1-8 սահմանակետերով անցնում է 3449մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 3273մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1253մ, հասնում Տաշիր քաղաքային, Մեծավան և Կաթնառատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7975մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ազարակ գյուղական համայնքը գտնվում է Լոռու մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Պրիվոլնոյե գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Օձուն գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Հովնաձոր գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Յաղդան գյուղական համայնքին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Գյուլագարակ գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ Ամրակից գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Ը» հատվածով՝ Լոռի-Բերդ գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ Լեջան գյուղական համայնքին:

ԱԳԱՐԱԿ -ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Ազարակ, Լեջան և Պրիվոլնոյե գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում է 552մ, հասնում Ազարակ, Պրիվոլնոյե և Օձուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 552մ է:

ԱԳԱՐԱԿ-ՕՁՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Ազարակ, Պրիվոլնոյե և Օձուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 2140.6մ նիշ ունեցող բլրի գագաթին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 550մ, հասնում բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 1373մ, հասնում Ազարակ, Օձուն և Հովնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1923մ է:

ԱԳԱՐԱԿ-ՀՈՎՆԱՆԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Ազարակ, Հովնաձոր և Օձուն գյուղական համայնքների տարածքներ բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1-4

սահմանակետերով անցնում 648մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում բլրի գագաթի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 124մ, հատելով դաշտային ճանապարհը, ջրբաժանով հասնում թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 204մ, հասնում 2090.4մ միջ ունեցող բլրի գագաթի թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը, շարունակվելով նույն ուղղությամբ, ջրբաժանի թիվ 8-20 սահմանակետերով անցնում է 1932մ, հասնում բլրի գագաթի թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ուղիղ գծով անցնում 1423մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 122մ, հասնում վարելահողի եզրի թիվ 23 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 463մ, հասնում վարելահողի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 27 սահմանակետով անցնում 658մ, հասնում բլրի գագաթին գտնվող Ագարակ, Հովնանաձոր և Յաղդան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5574մ է:

ԱԳԱՐԱԿ-ՅԱՂԴԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Ագարակ, Հովնանաձոր և Յաղդան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում է 325մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որտեղից նույն ուղղությամբ թիվ 3 սահմանակետով անցնում է 765մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 915մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 6-10 սահմանակետերով, Ահնիձոր գետով անցնում 2897մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 12-14 սահմանակետերով անցնում 1100մ, հասնում Ագարակ, Յաղդան և Գյուլագարակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6002մ է :

ԱԳԱՐԱԿ-ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Ագարակ, Ամրակից և Գյուլագարակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Ձորագետ գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1469մ, հասնում Ագարակ, Գյուլագարակ և Յաղդան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1469մ է :

ԱԳԱՐԱԿ-ԱՄՐԱԿԻՑ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Ե»

Ագարակ, Լոռի Բերդ և Ամրակից գյուղական համայնքների տարածքներ բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Ձորագետ գետով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 2398մ, հասնում Ագարակ, Ամրակից և Գյուլագարակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» սահմանակետին:

«Զ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2398մ է :

ԱԳԱՐԱԿ-ԼՈՌԻ ԲԵՐԴ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ «Ե» - «Ը»

Ագարակ, Լեջան և Լոռի Բերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 1095մ, հատելով մաքրման կայանի եզրագիծը, հասնում Ագարակ, Լոռի Բերդ և Ամրակից գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1095մ է:

ԱԳԱՐԱԿ-ԼԵՋԱՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը» - «Ա»

Ագարակ, Լեջան և Պրիվոլնոյե գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 1136մ, ջրբաժանով հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնում 1192մ, հասնում բլրի գագաթի թիվ 3

սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 4-8 սահմանակետերով անցնում 1144մ, հասնում 2101.1մ միջ ունեցող բլրի գագաթի թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10-15 սահմանակետերով անցնելով 1954մ, հասնում 1743.2մ միջ ունեցող բլրի գագաթի թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 244մ, հասնում 1662.9մ միջ ունեցող բլրի գագաթի թիվ 17 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 297մ, հասնում լանջի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 106մ, հասնում ջրբաժանի թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 20-23 սահմանակետերով անցնում 1693մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 25-29 սահմանակետերով անցնելով 1878մ, հասնում Լոռու ջրանցքի եզրին գտնվող թիվ 30 սահմանակետին, ապա ջրանցքով անցնելով 245մ, հասնում թիվ 31 սահմանակետին, որտեղից վարելահողի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 32-34 սահմանակետերով անցնում 981մ, հասնում Լոռի բերդ-Ազարակ ճանապարհի եզրին գտնվող թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը նույն ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, 36-41 սահմանակետերով անցնելով 1968մ, հասնում է Ազարակ, Լեջան և Լոռի Բերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12838մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԹԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աթան գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից, արևելքից և հարավից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տավուշի մարզին, արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ահնիձոր և «Գ»-«Ա» հատվածով՝ Շամուտ գյուղական համայնքներին:

ԱԹԱՆ – ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Լոռու և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ԱԹԱՆ – ԱՀՆԻԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Լեջան, Սվերդլով և Պրիվոլնոյե գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 2211մ, հասնում 2140.6մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 159մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 8-10 սահմանակետերով անցնում է 1745մ, հասնում Լեջան, Ագարակ և Պրիվոլնոյե գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4115մ է:

ԼԵՋԱՆ – ԱԳԱՐԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Լեջան, Ագարակ և Պրիվոլնոյե գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 1136մ, ջրբաժանով հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնում 1192մ, հասնում բլրի գագաթի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 4-8 սահմանակետերով անցնում 1144մ, հասնում 2101.1մ նիշ ունեցող բլրի

գագաթի թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10-15 սահմանակետերով անցնելով 1954մ, հասնում 1743.2մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 244մ, հասնում 1662.9մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 17 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 297մ, հասնում լանջի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 106մ, հասնում ջրբաժանի թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 20-23 սահմանակետերով անցնում 1693մ, հասնում թիվ 24 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 25-29 սահմանակետերով անցնելով 1878մ, հասնում Լոռու ջրանցքի եզրին գտնվող թիվ 30 սահմանակետին, ապա ջրանցքով անցնելով 245մ, հասնում թիվ 31 սահմանակետին, որտեղից վարելահողի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 32-34 սահմանակետերով անցնում 981մ, հասնում Լոռի Բերդ-Ազարակ ճանապարհի եզրին գտնվող թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը նույն ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, 36-41 սահմանակետերով անցնելով 1968մ, հասնում է Լեջան, Ազարակ և Լոռի Բերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12838մ է:

ԼԵՋԱՆ – ԼՈՌԻ ԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Լեջան, Բովաձոր և Լոռի Բերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից Մեսխանկա գետով սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 1412մ, հասնում է կամուրջի վրայի թիվ 3 սահմանակետին, ապա շարունակվելով նույն ուղղությամբ, անցնում է 280մ, արտադրական մասի եզրով հասնում ճանապարհի խաչմերուկի 1380.7մ նիշ ունեցող թիվ 4 սահմանակետին, այնուհետև ճանապարհով, թիվ 5-6 սահմանակետերով անցնելով 552մ, վարելահողի եզրով հասնում է Լեջան, Լոռի Բերդ և Ազարակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2244մ է:

ԼԵԶԱՆ – ԲՈՎԱԾՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Լեջան, Բովածոր և Ուռուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 321մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 2-9 սահմանակետերով անցնում 2827մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 11-13 սահմանակետերով անցնում 1662մ, հասնում ձորակի թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 308մ, հասնում է Ուռուտ-Լեջան ճանապարհի եզրի թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը վարելահողի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 1417մ, հասնում Մեսխանկա գետի ձախ ակիին գտնվող Լեջան, Բովածոր և Լոռի Բերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6535մ է:

ԼԵԶԱՆ – ՈՒՌՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Լեջան, Ուռուտ և Սվերդլով գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է 2294.1մ նիշ ունեցող բլրի գագաթին, սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, անցնում 426մ, հասնում Ուռուտ, Բովածոր և Լեջան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 426մ է:

ԼԵԶԱՆ – ՍՎԵՐԴԼՈՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Ա»

Լեջան, Սվերդլով և Պրիվոլնոյե գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, թիվ 1-8 սահմանակետերով անցնելով 1560մ, հասնում 1905.4մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 10-14 սահմանակետերով անցնելով 3682 մ, հասնում Լեջան, Ուռուտ և

Ավերդիլով գյուղական համայնքների տարածքների բաժանման 2294.1մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5242մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՈՒՒ ՍԱՐՁԻ ԼԵՈՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնապատ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Արջուտ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Դարպաս գյուղական համայնքին, հարավից և արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Հալավաքր գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Արագածոտնի մարզին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Սպիտակ քաղաքային, «Զ»-«Է» հատվածով՝ Ղուրսալի և «Է»-«Ա» հատվածով՝ Նոր Խաչակապ գյուղական համայնքներին:

ԼԵՈՆԱՊԱՏ - ԱՐՋՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Լեռնապատ, Արջուտ և Նոր Խաչակապ գյուղական համայնքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 183մ, հասնում է բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին, որից հետո ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 780մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, անցնում 288մ, հասնում է ջրհավաքի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, ջրհավաքով, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 331մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 179մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից շարունակվում է նույն ուղղությամբ, հատելով ավտոճանապարհը, անցնելով 150մ, հասնում է Փամբակ գետի ափին գտնվող թիվ 8 սահմանակետին, որից հետո թեքվում է հյուսիս-արևելք, Փամբակ գետով, թիվ 9 սահմանակետով անցնում է 244մ, հասնում Լեռնապատ, Արջուտ և Դարպաս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2155մ է:

ԼԵՈՆԱԴՊՍ - ԴԱՐԴԱՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Լեռնապատ, Դարպաս և Արջուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 1363մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք անցնում 390մ հասնում թիվ 9 սահմանակետին, որից հետո սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, վարելահողի եզրով հատելով դաշտային ճանապարհը, ջրբաժանի թիվ 10 սահմանակետով անցնում է 499մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 12 սահմանակետով անցնում 461մ, հասնում է բլրի գագաթի թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 14 սահմանակետով անցնում է 471մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնելով 219մ, հասնում բլրի գագաթի թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 534մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 646մ, հասնում է անտառի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 19-22 սահմանակետերով անցնում է 1345մ, հասնում է անտառի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, անտառի եզրով, թիվ 24-30 սահմանակետերով անցնում է 2162մ, հասնում է թիվ 31 սահմանակետին, որից հետո թեքվում է արևելք, անցնում 702մ, հասնում է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, գետով անցնում է 3597մ, հասնում թիվ 33 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 1836մ, հասնում է Լեռնապատ, Դարպաս և Հալավար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14225մ է:

ԼԵՈՆԱԴՊՍ - ՀԱԼԱՎԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Լեռնապատ, Հալավար և Դարպաս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է

դեպի արևմուտք, անցնում 211 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 878մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանով, թիվ 3 սահմանակետով անցնում 1594մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, թիվ 4 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 5-6 սահմանակետերով անցնում է 1388մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 807մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, բլրի լանջով, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 1603մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ջրբաժանով անցնում է 970մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում է 472մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 14-17 սահմանակետերով, վարելահողերի եզրով հատելով «Բոյդակ» գետակը, Հալավար գնացող ճանապարհը, անցնելով 1566մ, հասնում է թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 389մ, հասնում թիվ 19 սահմանակետին, որից հետո խոտհարքի եզրով, ջրբաժանով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 589մ, հասնում թիվ 20 սահմանակետին, թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ-արմուտք, ձորով, թիվ 21 սահմանակետով անցնում է 523մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ-արմուտք, թիվ 23-24 սահմանակետերով անցնում է 1370մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 27-28 սահմանակետերով անցնում է 2206մ, հասնում է թիվ 29 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 30-32 սահմանակետերով անցնում է 1768մ, հասնում Լեռնապատ, Հալավար գյուղական համայնքների և Արագածոտնի մարզի տարածքների հատման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16335մ է:

ԼԵՈՆԱՊՍ - ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը հանընկնում է Լոռու և Արագածոտնի մարզերի սահմանների հետ:

ԼԵՌՆԱՊԱՏ - ՍՊԻՏԱԿ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Լեռնապատ, Ղուրսալի գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1289մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, ձորով, թիվ 2-3 սահմանակետերով անցնում է 1355մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնում է 1266մ, հասնում է Լեռնապատ գյուղական, Սպիտակ քաղաքային համայնքների և Արագածոտնի մարզի տարածքների հատման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3910մ է:

ԼԵՌՆԱՊԱՏ-ՂՈՒՐՍԱԼԻ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ե»

Լեռնապատ, Ղուրսալի և Նոր Խաչակապ համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնելով 406մ, հասնում է 2011,6մ միջ ունեցող բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում է 316մ, հասնում բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ, անցնում 225մ, հասնում բլրի գագաթի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 308մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 5 սահմանակետով անցնում 735մ, հասնում 1931.04մ, միջ ունեցող բլրի գագաթի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ջրբաժանով անցնում 203մ, հասնում վարելահողի եզրի թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 8 սահմանակետով անցնելով 902մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվելով արևմուտք, անցնելով 371մ, հասնում է 2140.5մ միջ ունեցող բլրի գագաթի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում է 595մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 12 սահմանակետով անցնում է 1866մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 14-16

սահմանակետերով անցնում է 1589մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 18-19 սահմանակետերով անցնում 1674մ, հասնում Լեռնապատ, Ղուրսալի գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ» - «Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9188մ է:

ԼԵՌՆԱՊԱՏ-ՆՈՐ ԽԱՉԱԿԱԿ ԱՎՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»

Լեռնապատ, Նոր Խաչակապ և Արջուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 309մ, հասնում 1554.3մ միջ ունեցող բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ անցնում 401մ, հասնում հաջորդ բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 535 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ, ջրբաժանով, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 1078մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 203մ, հասնում ջրբաժանի թիվ 7 սահմանակետին, այնուհետև նույն ջրբաժանով, թիվ 8-10 սահմանակետերով անցնելով 1115մ, հասնում է ջրբաժանի Լեռնապատ, Նոր Խաչակապ և Ղուրսալի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3641մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՈՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լերնոնտովո գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Մարգահովիտ և «Բ»-«Գ» հատվածով Անտառաշեն գյուղական համայնքներին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Կոտայքի մարզին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Շահունյան և «Ե»-«Ա» հատվածով՝ Գուգարք գյուղական համայնքներին:

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ - ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Լերնոնտովո, Մարգահովիտ և Գուգարք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 357մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որից հետո ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 447մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 240մ, հասնում բլրի գագաթի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 237մ, հասնում 2558.1մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին, որից հետո նույն ջրբաժանով սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնելով 1125մ, հասնում 2529.9մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով անցնում 805մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 626մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնելով 1265մ, հատում Դիլիջան-Մարգահովիտ ավտոճանապարհը, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 687մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը վարելահողի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 769մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում

Աղստև գետի ձախ ափին գտնվող Լերմոնտովո, Մարգահովիտ և Անտառաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6560մ է:

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ - ԱՆՏԱՌԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՈ՝ «Բ» - «Գ»

Աղստև գետի ձախ ափին գտնվող Լերմոնտովո, Անտառաշեն և Մարգահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, խոտհարքի և արոտի միջնակով, թիվ 1-3 սահմանակետերով անցնելով 664մ, հատելով ճանապարհի շրջադարձը, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, անցնելով 700մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որից առվով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 253մ, հասնում ձորակի ու առվի հատման թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ձորակով, հոսանքին հակառակ, թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 128մ, հատում միջգյուղյա ճանապարհը, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, շրջանցելով կառուցապատ շենքի արևմտյան մասը, թիվ 8-9 սահմանակետերով անցնում 428մ, ճանապարհով հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 268մ, հասնում ձորակի եզրի թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորակով՝ հոսանքին հակառակ, թիվ 12-18 սահմանակետերով անցնելով 1617մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 225մ, դաշտային ճանապարհով հասնում թիվ 20 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 215 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 45 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 23 սահմանակետով անցնում 241մ, հասնում է թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հատելով Գարպի գետակը, անտառի եզրով, թիվ 25-26 սահմանակետերով անցնելով 1949մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 238մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է

դեպի հարավ, անցնելով 628մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 524մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 1389մ, հասնում Լերմոնտովո, Անտառաշեն գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9511մ է:

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

«Գ» - «Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Լոռու և Կոտայքի մարզերի սահմանների հետ:

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ - ՇԱՐՈՒՄՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Լերմոնտովո, Շահունյան և Գուգարք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, խոտհարքի եզրով հատելով ճանապարհը, սպորտբազայի ցանկապատով անցնում 223մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա շարունակվելով նույն ուղղությամբ, ռեստորանի եզրագծով անցնելով 301մ, հասնում է Վանաձոր-Դիլիջան ճանապարհի վրա գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անտառով, անցնում 797մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում հարավ-արևելք, այնուհետև հարավ-արևմուտք, անտառով, թիվ 4-17 սահմանակետերով անցնում 1105մ, հասնում ջրբաժանի թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով, թիվ 19-21 սահմանակետերով անցնելով 844մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 265մ, հասնում ջրբաժանի 23 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, 24 սահմանակետով անցնում 702մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 365մ, հասնում ջրբաժանի թիվ 26 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 232մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 313մ, հասնում 2502.6մ նիշ ունեցող բլրի վրա գտնվող թիվ 28 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ անցնում 403մ, հասնում բլրի թիվ 29

սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 1078մ, հասնում 2519.8մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 33-36 սահմանակետերով անցնում 1886մ, հասնում Լերմոնտովո, Շահունյան գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8514մ է:

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ - ԳՈՒԳԱՐՔ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե» - «Ա»

Լերմոնտովո, Մարգահովիտ և Գուգարք համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնելով 2410մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 77մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 722մ, հասնում Վանաձոր-Դիլիջան ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը նշված ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնելով 1090մ, պահեստի ցանկապատով հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 260մ, հասնում Լերմոնտովո, Գուգարք և Շահունյան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4559մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՐՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լորուտ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը արևմուտքից և հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ծաղկաշատ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Տավուշի մարզին, «Գ»-«Դ» հատվածով՝ Շամուտ և «Դ»-«Ե» հատվածով՝ Ահնիձոր գյուղական համայնքներին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Տավուշի մարզին, արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Մարց և «Է»-«Ա» հատվածով՝ Քարինջ գյուղական համայնքներին:

ԼՈՐՈՒՏ-ԾԱՂԿԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Լորուտ, Ծաղկաշատ և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս, ապա արևելք, թիվ 1-92 սահմանակետերով անցնում 8388մ, հասնում Լորուտ, Ծաղկաշատ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8388մ է:

ԼՈՐՈՒՏ-ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Բ»-«Գ»

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Լոռու և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ԼՈՐՈՒՏ-ՇԱՄՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»

Լորուտ, Շամուտ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնելով 596մ, հասնում 1867.0մ, նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը

թեքվում է դեպի հարավ, անցնում 366մ, հասնում ջրհավաքի թիվ 3 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, անցնելով 321մ, հասնում վարելահողի եզրի թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, խոտհարքի եզրով անցնելով 242մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 6-9 սահմանակետերով անցնելով 1283մ, վարելահողի և խոտհարքի եզրով հասնում է ջրհավաքի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը Մարց գետի վտակով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10-17 սահմանակետերով անցնելով 1020մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 389մ, հասնում ջրհավաքի թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 238մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ, վարելահողի և խոտհարքի եզրով անցնելով 237մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրհավաքով, թիվ 21-27 սահմանակետերով անցնելով 1976մ, հասնում թիվ 28 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 235մ, հասնում թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 190մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրագծով, թիվ 31-36 սահմանակետերով անցնում 1018մ, հասնում Լորուտ, Շամուտ և Ահնիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8111մ է:

ԼՈՐՈՒՏ - ԱՐՆԻՉՈՐ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Լորուտ, Ահնիձոր և Շամուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում է 341մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևելք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում է 336մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 886մ, հասնում է թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, 8-14 սահմանակետերով անցնում է 2204մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 571մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-

արևմուտք, ապա հարավ-արևելք, անտառի եզրով անցնում է 8091մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 58մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 19-26 սահմանակետերով անցնում է 1738մ, հասնում է թիվ 27 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 238մ, հասնում է Լորուտ, Ահնիձոր և Տավուշի մարզի տարածաքնների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14463մ է:

ԼՈՐՈՒՏ - ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Ե»-«Զ»

«Ե»-«Զ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Լոռու և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ԼՈՐՈՒՏ - ՄԱՐՑ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ «Զ»-«Է»

Լորուտ, Մարց և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, 1-7 սահմանակետերով անցնում 2721մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում 338մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10-11 սահմանակետերով անցնում 594մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 485մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անցնում 400մ, հասնում ջրհավաքի թիվ 14 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 658մ, հատելով ճանապարհը, հասնում ճանապարհների հատման 1845.0մ նիշ ունեցող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը, շարունակվելով նույն ողղությամբ, անցնում է 432մ, հասնում բլրի գագաթի թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, արոտավայրի և խոտհարքի եզրով անցնում 460մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 18-19 սահմանակետերով անցնում 2626մ, հասնում խոտհարքի եզրի թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհները, թիվ 21-22 սահմանակետերով անցնելով 3269մ, հասնում ջրհավաքի թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 24 սահմանակետով անցնում 2768մ, հասնում թիվ 25 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ճանապարհը, արտադրական մասի եզրով անցնում 565մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք և հարավ, անտառի միջով, թիվ 27-47 սահմանակետերով անցնում է 4053մ, հասնում թիվ 48 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 375մ, հասնում թիվ 49 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 615մ, հասնում թիվ 50 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 51 սահմանակետով անցնում 681մ, հասնում թիվ 52 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 160մ, հասնում թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 54 սահմանակետով անցնում 1607մ, հասնում թիվ 55 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևելք, ձորով, թիվ 56-104 սահմանակետերով անցնում է 8723մ և հասնում Լորուտ, Մարց գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 31531մ է:

ԼՈՐՈՒՏ-ՔԱՐԻՆՋ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Է»-«Ա»

Լորուտ, Ծաղկաշատ և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 73մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևմուտք, անցնում 8մ, հասնում Լորուտ, Մարց և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»- «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 81մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լոռի Բերդ գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը արևմուտքից և հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Բովաձոր գյուղական համայնքին, հյուսիսից «Բ»-«Գ» հատվածով՝ Լեջան գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Ագարակ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Ամրակից գյուղական համայնքին, հարավից «Ե»-«Ա» հատվածով՝ Ստեփանավան քաղաքային համայնքին, հյուսիսից «Զ»-«Է» հատվածով՝ Ուռուտ գյուղական համայնքին, հյուսիսից, արևելքից և հարավից «Է»-«Զ» հատվածով՝ Ստեփանավան քաղաքային համայնքին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ - ԲՈՎԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Լոռի Բերդ, Բովաձոր գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 247մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 275մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում 828մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը անցնում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 186մ, հասնում Մեսխանկա գետի ափին գտնվող թիվ 5 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևելք, Մեսխանկա գետով, թիվ 6-9 սահմանակետերով անցնում 1085մ, հասնում Լոռի Բերդ, Բովաձոր և Լեջան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2621մ է:

ԼՈՌԻ ԲԵՐՂ - ԼԵՋԱՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Լոռի Բերդ, Լեջան և Բովաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից Մեսխանկա գետով սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 1412մ, հասնում է կամրջի վրայի թիվ 3 սահմանակետին, ապա շարունակվելով նույն ուղղությամբ, անցնում է 280մ, արտադրական մասի եզրով հասնում ճանապարհի խաչմերուկի 1380.7մ նիշ ունեցող թիվ 4 սահմանակետին, այնուհետև ճանապարհով, թիվ 5-6 սահմանակետերով անցնելով 552մ, վարելահողի եզրով հասնում է Լոռի Բերդ, Լեջան և Ագարակ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2244մ է:

ԼՈՌԻ ԲԵՐՂ - ԱԳԱՐԱԿ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Լոռի Բերդ, Ագարակ և Լեջան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 1095մ, հատելով մաքրման կայանի եզրագիծը, հասնում Լոռի Բերդ, Ագարակ և Ամրակից գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1095մ է:

ԼՈՌԻ ԲԵՐՂ - ԱՄՐԱԿԻՑ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Լոռի Բերդ, Ամրակից գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է Չորագետով դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս, թիվ 1-6 սահմանակետերով անցնելով 2123մ, հասնում Չորագետ գետի ափին գտնվող Լոռի Բերդ, Ագարակ և Ամրակից գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2123մ է:

ԼՈՌԻ ԲԵՐՂ - ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ա»

Լոռի Բերդ, Բովաձոր գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 290մ, հասնում վարելահողի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնում 826մ, հասնում բլրի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում է 264մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, անցնում 53մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 655մ, հասնում Լոռի Բերդ մտնող ճանապարհի և վարելահողի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևմուտք, նշված ճանապարհով, թիվ 7-8 սահմանակետերով անցնում է 1650մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 63մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 145մ, հասնում Ձորագետ գետի ափին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը Ձորագետ գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 12-22 սահմանակետերով անցնում 2585մ, հասնում Լոռի Բերդ, Ամրակից գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6532մ է:

ԼՈՌԻ ԲԵՐՂ - ՈՒՌՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ» - «Է»

Լոռի Բերդ, Ուռուտ գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Լոռու ջրանցքի և Տաշիր-Ստեփանավան ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրանցքի ուղղությամբ անցնում 73մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 374մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 354մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 227մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, որտեղից ճանապարհով

թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 154մ, հասնում Լոռի Բերդ, Ուռուտ գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Զ» - «Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1181մ է:

ԼՈՌԻ ԲԵՐԴ - ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է» - «Զ»

Լոռի Բերդ, Ուռուտ գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 182մ, հասնում խոտհարքի և վարելահողի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 264մ, հասնում վարելահողի և խոտհարքի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում 590մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, անցնում 410մ, հատելով դաշտային ճանապարհը, այնուհետև Լոռու ջրանցքը, հասնում վարելահողի, խոտհարքի և արոտի եզրագծի վրա գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1128մ, հասնում Տաշիր-Ստեփանավան ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը նշված ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնելով 923մ, հասնում Լոռու ջրանցքի և ճանապարհի հատման տեղում գտնվող Լոռի-Բերդ, Ուռուտ գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3497մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լուսաղբյուր գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից Մեծ Պարնի գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Սարալանջ գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Մեծ Պարնի գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Հարթագյուղ և «Ե»-«Զ» հատվածով՝ Խնկոյան գյուղական համայնքներին, արևմուտքից և հյուսիսից «Զ»-«Ա» հատվածով՝ Շիրակի մարզին:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ – ՄԵԾ ՊԱՐՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Լուսաղբյուր, Մեծ Պարնի գյուղական համայնքների և Շիրակի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 547մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, հատելով Չիչխան գետը, թիվ 2 սահմանակետով անցնելով 1920մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնելով 486մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 276մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 436մ, հասնում է 2376մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 7-8 սահմանակետերով անցնելով 698մ, հասնում 2379.8մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող Լուսաղբյուր, Սարալանջ և Մեծ Պարնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4363մ է:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ –ՍԱՐԱԼԱՆՋ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

2379.8 մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող Լուսաղբյուր, Մեծ Պարնի և Սարալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ջրբաժանով թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1572մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 363մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 193մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնում 613մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1003մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևմուտք, անցնելով 269մ, հասնում 2232.9մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Լուսաղբյուր, Սարալանջ և Մեծ Պարնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4012մ է:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ – ՄԵԾ ՊԱՐՆԻ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

2232.9 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Լուսաղբյուր, Մեծ Պարնի և Սարալանջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 455մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք ապա հարավ-արևելք, թիվ 2-15 սահմանակետերով, արտադրական մասերի եզրագծով, վարելահողի եզրով անցնելով 3217մ, հասնում հատուկ նշանակության հողերի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, որից հետո հատուկ նշանակության հողերի եզրով հատելով դաշտային ճանապարհը, անտառաշերտը, անցնելով 411մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հատելով երկաթգիծը, ապա Գյունրի-Սպիտակ մայրուղին, անցնելով 248մ, հասնում է թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը վարելահողի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, Նալբանդի ջրանցքը, անցնելով 522մ, հասնում վարելահողի և արոտի եզրին գտնվող թիվ 19 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 20 սահմանակետով անցնելով 944մ, հասնում

Լուսաղբյուր, Մեծ Պարնի և Հարթագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5797մ է:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ –ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԿԵՏԻՆ՝ «Դ» - «Ե»

Լուսաղբյուր, Խնկոյան և Հարթագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 951մ, հատելով Լուսաղբյուր գնացող ճանապարհը, Նալբանդի ջրանցքը, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, բնակավայրի եզրով հատելով ավտոճանապարհը, ջրատարը, անցնելով 823մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա շարունակվելով դեպի արևելք, անցնելով վարելահողերի միջնակով 1340մ, հասնում Լուսաղբյուր, Մեծ Պարնի և Հարթագյուղ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3114մ է:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ –ԽՆԿՈՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԵՏԻՆ՝ «Ե» - «Զ»

Լուսաղբյուր, Խնկոյան գյուղական համայնքների և Շիրակի մարզի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը 2176.9մ նիշ ունեցող բլրի գագաթից թեքվում է դեպի արևելք, անցնում 591մ, հասնում ջրբաժանի թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 643մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս, անցնում 330մ, հասնում վարելահողի եզրի թիվ 3 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնելով 330մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս-արևելք, վարելահողի եզրով անցնելով 599մ, հասնում Փամբակ գետի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով 130մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողի միջնակով, անցնելով 648մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որից հետո թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով 373մ, հատելով Խնկոյան գնացող ճանապարհը, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք,

անցնելով 531մ, հասնում Լուսաղբյուր, Խնկոյան և Ջարթագյուղ համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4175մ է:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ –ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Ա»

«Զ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Լոռու և Շիրակի մարզերի սահմանների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՍԱՐՁԻ ԾԱՂԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծաղկաշատ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Նեղոց գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Շնող գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Տավուշի մարզին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Լորուտ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Քարինջ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիս-արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Հաղպատ գյուղական համայնքին:

ԾԱՂԿԱՇԱՏ – ՆԵՂՈՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Ծաղկաշատ, Նեղոց և Հաղպատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լեռնագագաթից ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, անտառի եզրով, թիվ 1 սահմանակետով անցնում 580մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 419մ, հասնում Ծաղկաշատ, Նեղոց և Շնող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 999մ է:

ԾԱՂԿԱՇԱՏ - ՇՆՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Ծաղկաշատ, Շնող և Նեղոց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 99մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում 177մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Անտառի եզրի թիվ 2 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով և ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3-4 սահմանակետերով անցնելով 612մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է

դեպի հարավ-արևելք, թիվ 6-8 սահմանակետերով անցնում 531մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 10 սահմանակետով անցնում է 337մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավ-արևելք, թիվ 12-18 սահմանակետերով անցնելով 1553մ, հասնում է 1752.0մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 20-21 սահմանակետերով անցնելով 1225մ, հասնում ջրբաժանի թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 629մ, հասնում ջրբաժանի թիվ 23 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում հարավ-արևելք, թիվ 24-27 սահմանակետերով անցնում 1538 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 28 սահմանակետին, որից հետո անցնելով նույն ուղղությամբ՝ հատում է ձորերը, գագաթներով թիվ 29-32 սահմանակետերով անցնում է 1065մ, հասնում Ծաղկաշատ, Շնող գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7766մ է:

ԾԱՂԿԱՇԱՏ - ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Լոռու և Տավուշի մարզերի սահմանի հետ:

ԾԱՂԿԱՇԱՏ-ԼՈՐՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Ծաղկաշատ, Լորուտ և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-92 սահմանակետերով անցնում 8388մ, հասնում Ծաղկաշատ, Լորուտ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8388 մ է:

ԾԱՂԿԱՇԱՏ-ՔԱՐԻՆՋ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Ծաղկաշատ, Քարինջ և Չաղպատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անտառի միջով, բլրագագաթով հատում ձորեր, թիվ 1-6 սահմանակետով անցնում 1535մ, հասնում Ծաղկաշատ, Քարինջ և Լորուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1535մ է:

ԾԱՂԿԱՇԱՏ - ՉԱՂՊԱՏ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»

Ծաղկաշատ, Նեղոց և Չաղպատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բլրագագաթից թեքվում է հյուսիս-արևմուտք, ջրբաժանով, թիվ 1 սահմանակետով անցնում 409մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ-արևմուտք, անտառի միջով, ձորով, թիվ 2-4 սահմանակետերով անցնում 2641մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, լանջով, թիվ 6-11 սահմանակետերով անցնում 1298մ, հասնում բլրագագաթի թիվ 12 սահմանակետին , այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 13-16 սահմանակետերով անցնում 2908մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք և հարավ, թիվ 18-20 սահմանակետերով անցնում 2058մ, հասնում թիվ 21 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք և արևելք, անտառի եզրագծով, գագաթներով և ջրբաժաններով, թիվ 22-64 սահմանակետերով անցնում 3297մ, հասնում թիվ 65 սահմանակետին, թիվ 65 սահմանակետից թեքվում է դեպի հարավ, անտառի եզրագծի ոլորաններով, ջրբաժաններով հատում ձորերը, թիվ 66-72 սահմանակետերով անցնում 18501մ, հասնում անտառի եզրի թիվ 73 սահմանակետին: Թիվ 73 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, անտառի միջով, թիվ 74-80 սահմանակետերով անցնում 3272 մ, հասնում Ծաղկաշատ, Չաղպատ և Քարինջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 34384մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱԴՐՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կաթնաղբյուր գյուղական համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կաթնառատ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Նովոսելցովո գյուղական և «Գ»-«Դ» հատվածով՝ Ստեփանավան քաղաքային համայնքներին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Ուրասար և «Ե»-«Զ» հատվածով՝ Մեծ Պարնի գյուղական համայնքներին, արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Շիրակի մարզին:

ԿԱԹՆԱԴՐՅՈՒՐ– ԿԱԹՆԱՌԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Կաթնաղբյուր, Կաթնառատ գյուղական համայնքների և Շիրակի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, Ձորագետ գետով, թիվ 1-121 սահմանակետերով անցնում 16072 մ, հասնում է Կարակալա գետի ջրախառնուրդի թիվ 122 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 123 սահմանակետով անցնում 208մ, հասնում է թիվ 124 սահմանակետին: Թիվ 124 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք 828մ, հասնում է թիվ 125 սահմանակետին: Թիվ 125 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թամբի 126, վարելահողերի և խոտհարքի միջնակի թիվ 127 սահմանակետերով հատելով դաշտային ճանապարհը, անցնելով 1420մ, հասնում թիվ 128 սահմանակետին: Թիվ 128 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 129-130 սահմանակետերով անցնում 201մ, հասնում թիվ 131 սահմանակետին: Թիվ 131 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Ձորագետ իջնող վտակը, անցնելով 111մ, հասնում թիվ 132 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, վտակին զուգահեռ անցնելով 139մ, հասնում թիվ 133 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 134-135 սահմանակետերով անցնելով 273մ, հատելով ձորակը, հասնում թիվ 136 սահմանակետին: Թիվ 136 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հյուսիս-արևելք, թիվ 137-138 սահմանակետերով, վարելահողի և ձորակի եզրագծով անցնում

1697ն, հասնում Կաթնաղբյուր, Կաթնառատ և Նովոսելցովո գյուղական համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20950մ է:

արևմուտք, թիվ 9-11 սահմանակետերով անցնելով 356մ, հասնում ջրերի մաքրման կայանի եզրագծի թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 518մ, հասնում անտառի եզրի թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա արևելք, Վանաձոր քաղաքի եզարագծով, թիվ 14-20 սահմանակետերով անցնելով 855մ, հասնում թիվ 21 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևելք, շրջանցելով Վանաձոր քաղաքի եզրագիծը, թիվ 22-29 սահմանակետերով անցնելով 417մ, հասնում թիվ 30 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 31-38 սահմանակետերով անցնելով 543մ, հատելով Գարա գետը, հասնում Վանաձոր-Դիլիջան ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը նշված ճանապարհով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 94մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 40 սահմանակետին, որից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Վանաձոր քաղաքի եզրագծով, թիվ 41-42 սահմանակետերով անցնելով 386մ, հասնում է թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնելով 271մ, հասնում թիվ 44 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 217 մ, հասնում է թիվ 45 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 46-47 սահմանակետերով անցնելով 531մ, հասնում թիվ 48 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 49-50 սահմանակետերով անցնելով 855մ, հասնում թիվ 51 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևմուտք, անցնում 279մ, հասնում պիոներական ճամբարի եզրագծի թիվ 52 սահմանակետին: Թիվ 52 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորակը, անցնելով 248մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը Վանաձոր քաղաքի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 54 սահմանակետով անցնելով 1136մ, հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 56-69 սահմանակետերով անցնելով 1691մ, հասնում հյուրանոցային համալիրի եզրագծի թիվ 70 սահմանակետին: Թիվ 70 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, նշված համալիրի եզրով, թիվ 71-75 սահմանակետերով անցնելով 649մ, հասնում թիվ 76 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևելք, ճոպանուղի գնացող ճանապարհով, թիվ 77-81 սահմանակետերով անցնելով 1187մ, հասնում թիվ 82 սահմանակետին, այնուհետև ճանապարհի մյուս եզրով թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս-արևելք, թիվ 83-87 սահմանակետերով անցնելով 1327մ,

հասնում հյուրանոցային համալիրի եզրագծի թիվ 88 սահմանակետին: Թիվ 88 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հյուրանոցային համալիրի եզրագծով, թիվ 89-93 սահմանակետերով անցնելով 1052մ, հասնում թիվ 94 սահմանակետին, այնուհետև Վանաձոր քաղաքի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, կառուցապատ տարածքի եզրագծով, թիվ 95-100 սահմանակետերով անցնելով 1332մ, հասնում թիվ 101 սահմանակետին: Թիվ 101 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 102 սահմանակետով անցնելով 573մ, հասնում ճամբարի եզրագծի թիվ 103 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, պիոներական ճամբարի եզրագծով անցնելով 257մ, հասնում հանգստյան տան թիվ 104 սահմանակետին: Թիվ 104 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ապա հյուսիս-արևմուտք, շրջանցելով հանգստյան տան և պիոներական ճամբարի եզրագիծը, թիվ 105-112 սահմանակետերով անցնելով 1159մ, հասնում տնակային ավանի մոտ գտնվող թիվ 113 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրագծով, թիվ 114-116 սահմանակետերով անցնելով 569մ, հասնում էլեկտրական ենթակայանի թիվ 117 սահմանակետին, որից հետո Վանաձոր գետին զուգահեռ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 118-127 սահմանակետերով անցնելով 2207մ, հասնում թիվ 128 սահմանակետին: Թիվ 128 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, Վանաձոր գետին զուգահեռ՝ գյուղատնտեսական արտադրական մասի, ջերմոցների, այգեգործության և անտառի եզրագծով, թիվ 129-144 սահմանակետերով անցնելով 2860մ, հասնում է Շահունյան, Ղարպաս գյուղական և Վանաձոր քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 21908մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շամուտ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տավուշի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Աթան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ահնիձոր գյուղական համայնքին և արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Լորուտ գյուղական համայնքին:

ՇԱՄՈՒՏ – ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Լոռու և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ՇԱՄՈՒՏ - ԱԹԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Շամուտ, Աթան գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 589մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ ապա հարավ-արևմուտք, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 659մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 913մ, հասնում բլրի գագաթի թիվ 11 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, անցնում 1535մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, հատելով ճանապարհը, Մարց գետի վտակը, թիվ 1-16 սահմանակետերով անցնում 566մ, հասնում թիվ 17 սահմանակետին այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հարավ, անցնելով 906մ, հասնում Շամուտ, Աթան և Ահնիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5168մ է:

ՇԱՍՈՒՏ - ԱՅՆԻՉՈՐ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ`«Գ»-«Դ»

Շամուտ, Լորուտ և Ահնիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 129մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2-3 սահմանակետերով անցնում է 306մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 646մ, հասնում երկաթգծի մոտ գտնվող թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 390մ, հասնում է անտառի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, որից հետո անտառի եզրով թեքվում է դեպի արևելք, անցնում 220մ, հասնում է թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում է 714մ, հասնում է բլրի գագաթի թիվ 11 սահմանակետին, որից հետո թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով 213մ, հասնում է ջրբաժանի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, շրջանցելով անտառը, թիվ 13 սահմանակետով անցնելով 681մ, հասնում է վարելահողի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, որից հետո թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 440մ, հասնում է ջրբաժանին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, ջրբաժանով անցնելով 465մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում դեպի հյուսիս արևելք, թիվ 17 սահմանակետով անցնում է 681մ, հասնում է Շամուտ, Աթան և Ահնիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4886մ է:

ՇԱՍՈՒՏ – ԼՈՐՈՒՏ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ`«Դ»-«Ա»

Շամուտ, Լորուտ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնելով 596մ, հասնում 1867.0մ միջ ունեցող բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 366մ, հասնում ջրհավաքի թիվ 3 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, անցնելով 321մ, հասնում վարելահողի եզրի թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, խոտհարքի եզրով անցնելով 242մ,

հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 6-9 սահմանակետերով անցնելով 1283մ, վարելահողի և խոտհարքի եզրով հասնում ջրհավաքի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը Մարց գետի վտակով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10-17 սահմանակետերով անցնելով 1020մ, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 389մ, հասնում ջրհավաքի թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 238մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ, վարելահողի և խոտհարքի եզրով անցնելով 237մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրհավաքով, թիվ 21-27 սահմանակետերով անցնելով 1976մ, հասնում թիվ 28 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 235մ, հասնում թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 190մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրագծով, թիվ 31-36 սահմանակետերով անցնում 1018 մ, հասնում Շամուտ, Լորուտ և Ահնիձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8111մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՐՅՈՒՆԸ**

Շենավան գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Պուշկինո գյուղական համայնքին, արևելքից «Բ» - «Գ» հատվածով՝ Արևաշող գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Սպիտակ քաղաքային համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Սարահարթ գյուղական համայնքին:

ՇԵՆԱՎԱՆ – ՊՈՒՇԿԻՆՈ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Շենավան, Սարահարթ և Պուշկինո գյուղական համայնքների տարածքների բաժանման՝ բլրի գագաթի «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-17 սահմանակետերով անցնում 1001մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 18-34 սահմանակետերով անցնելով 1547մ, հասնում 2837մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Շենավան, Արևաշող և Պուշկինո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին :

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2548մ է:

ՇԵՆԱՎԱՆ – ԱՐԵՎԱՇՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Շենավան, Պուշկինո և Արևաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 1-7 սահմանակետերով հատելով բարձունքներ, անցնելով 586մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք և թիվ 9-15 սահմանակետերով անցնում է 971մ, հասնում է թիվ 16 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 17-30 սահմանակետերով անցնում է 2421մ, հասնում է թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 609մ, հասնում 2644,2մ նիշ ունեցող բլրի գագաթին

գտնվող թիվ 32 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում 789մ, հասնում 2509մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 281մ, հասնում բլրի գագաթի թիվ 34 սահմանակետին, որից հետո կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 35-36 սահմանակետերով անցնելով 1047մ, հասնում լանջի թիվ 37 սահմանակետին, որից հետո թեքվում դեպի հարավ-արևմուտք, անցնում 715մ, հատելով ձորակը, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 242մ, հասնում 2220,2մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, անցնում 204մ, հասնում թիվ 40 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 41 սահմանակետով, ջրբաժանով անցնելով 317մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով, բլուրներով, թիվ 43-46 սահմանակետերով անցնում 1475մ, հասնում 1971,6մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 47 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ, ջրբաժանով անցնում 377մ, հասնում թիվ 48 սահմանակետին, ապա հատելով Շենավան գնացող ավտոճանապարհը, վարելահողի եզրով անցնում է 163 մ, հասնում թիվ 49 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում է 178 մ, հասնում 1892,1մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 51-56 սահմանակետերով անցնում 1183մ, հասնում 1853,1մ նիշ ունեցող բլրի գագաթի 57 սահմանակետին: Թիվ 57 սահմանակետից սահմանագիծը թեքվում է նույն ուղղությամբ, ջրբաժանով անցնելով 228մ, հասնում Շենավան, Արևաշող գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11786մ է:

ՇԵՆԱՎԱՆ – ՄՊԻՏԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ» - «Դ»

Շենավան, Սարահարթ գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 168մ, հասնում Փամբակ գետի ափին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից Փամբակ գետով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 2-10 սահմանակետերով անցնելով 1250մ, հասնում Փամբակ գետի ափին գտնվող թի 11 սահմանակետին, այնուհետև թեքվում հյուսիս-արևելք, անցնում 295

մ, հասնում ժայռի եզրի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառաշերտի եզրով անցնում 436մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 481մ, հատելով ճանապարհը, հասնում թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 298մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրբաժանով, թիվ 16-17 սահմանակետերով անցնելով 864մ, հասնում բլրի գագաթին գտնվող Շենավան, Արևաշող գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3793մ է:

ՇԵՆԱՎԱՆ – ՍԱՐԱՀԱՐՔ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Դ» - «Ա»

Շենավան, Սարահարթ և Պուշկինո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում թիվ 1-6 սահմանակետերով 775մ, հասնում Փամբակ գետի ափին գտնվող թիվ 7 սահմանակետին, որտեղից սահմանագիծը Փամբակ գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8-29 սահմանակետերով անցնելով 1658մ, հասնում Փամբակ գետի ափին գտնվող թիվ 30 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 31-46 սահմանակետերով անցնում 2292մ, հասնում թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 48-50 սահմանակետերով անցնում 2284մ, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 52 սահմանակետով, դաշտային ճանապարհի եզրով անցնում է 1341մ, հասնում է թիվ 53 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 638մ, հասնում թիվ 54 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, անցնում 180մ, հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 869մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 56 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, հատելով բարձունքներ, առուններ, դաշտային ճանապարհով, թիվ 57-63 սահմանակետերով անցնում է 3235մ, հասնում է թիվ 64 սահմանակետին: Թիվ 64 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 65-66 սահմանակետերով անցնում 502մ, հասնում ջրբաժանի թիվ 67 սահմանակետին,

ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 68 սահմանակետով անցնում 820մ, հասնում է թիվ 69 սահմանակետին, ապա ջրբաժանով թեքվելով հարավ-արևելք, անցնում է 310մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող Շենավան, Սարահարթ գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14902մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շնող գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Քարկոփ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Տավուշի մարզին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Թեղուտ գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Տավուշի մարզին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Ծաղկաշատ գյուղական համայնքին, «Զ»-«Է» հատվածով՝ Նեղոց գյուղական համայնքին, «Է»-«Ը» հատվածով՝ Մեծ Այրում գյուղական համայնքին, «Ը»-«Ա» հատվածով՝ Գոճկան գյուղական համայնքին:

ՇՆՈՂ - ՔԱՐԿՈՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Շնող, Գոճկան և Քարկոփ համայնքների տարածքների բաժանման՝ Դեբեդ գետի ափին գտնվող «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Դեբեդ գետով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 357մ, հասնում Շնող, Քարկոփ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 357մ է:

ՇՆՈՂ – ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Լոռու և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ՇՆՈՂ – ԹԵՂՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Շնող, Թեղուտ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման՝ բարձունքի վրա գտնվող «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս, թիվ 1 սահմանակետով անցնում 423մ, հասնում թիվ 2

սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանով անցնում 1735մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը, կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, անցնում է 240մ, հասնում թիվ 4 սահմանակետին, հետո թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 686մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 116մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից անտառի միջով, ձորակով սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, թիվ 7-22 սահմանակետերով անցնում 2215 մ, հասնում ձորերի հատման թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք, ձորով, թիվ 24-38 սահմանակետերով անցնում 2713մ, հասնում թիվ 39 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս, անտառի միջով, ձորով, թիվ 40-53 սահմանակետերով անցնում 1747մ, հասնում թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է դեպի արևելք, անցնում 58մ, հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով, ջրբաժանով, թիվ 56-63 սահմանակետերով անցնում է 3109մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 64 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 65 սահմանակետով անցնում 493մ, հասնում թիվ 66 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, անցնում 31մ, հասնում թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը, կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ, անցնում է 256մ, հասնում Շնող գետի վտակի ափին գտնվող թիվ 68 սահմանակետին, այնուհետև նշված վտակով թեքվում է դեպի հյուսիս, վարելահողի եզրով, թիվ 69-74 սահմանակետերով անցնելով 657մ, հատելով Թեղուտ գնացող ճանապարհը, հասնում է սղոցարանի ցանկապատի եզրին գտնվող թիվ 75 սահմանակետին, որից հետո սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ջրհավաքի թիվ 76-81 սահմանակետերով անցնելով 1159մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 82 սահմանակետին: Թիվ 82 սահմանակետից սահմանագիծը նշված ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 83-86 սահմանակետերով անցնելով 378մ, հասնում թիվ 87 սահմանակետին, այնուհետև նույն ճանապարհով թեքվում է դեպի արևելք, անցնում 150մ, հասնում թիվ 88 սահմանակետին: Թիվ 88 սահմանակետից սահմանագիծը թիվ 89 սահմանակետով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 255մ, հասնում 918.0մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 90 սահմանակետին: Թիվ 90 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 91-92 սահմանակետերով անցնելով 327մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 93 սահմանակետին: Թիվ 93 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 94-95 սահմանակետերով անցնելով 598մ, հասնում ջրբաժանի թիվ

96 սահմանակետին: Թիվ 96 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1070մ, հասնում ճանապարհի և արտադրական մասի եզրի թիվ 97 սահմանակետին: Թիվ 97 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ճանապարհով, թիվ 98-99 սահմանակետերով անցնելով 135 մ, հասնում թիվ 100 սահմանակետին, այնուհետև թեքվելով դեպի հարավ, շրջանցելով արտադրական մասը, հատելով ճանապարհը, թիվ 101 սահմանակետով անցնելով 38մ, հասնում ջրհավաքի թիվ 102 սահմանակետին, որի աջ մասում գտնվում է հուշարձանը: Թիվ 102 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 103-110 սահմանակետերով անցնելով 2091մ, հասնում ջրբաժանի և անտառային հողերի բաժանման թիվ 111 սահմանակետին: Թիվ 111 սահմանակետից թեքվում է դեպի հարավ, այնուհետև հարավ-արևելք, ջրբաժանով իջնում Շնող գետի վտակը, թեքվում անտառի եզրով, Շնող գետի վտակով անցնում 4030մ, հասնում թիվ 112 սահմանակետին: Թիվ 112 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի միջով, ձորով, թիվ 113-140 սահմանակետերով անցնում 4887մ, հասնում Շնող, Թեղուտ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 29586մ է:

ՇՆՈՂ – ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

«Դ»-«Ե» հատվածում սահմանագիծը համընկնում է Լոռու և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ՇՆՈՂ – ԾԱՂԿԱՇԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Շնող, Ծաղկաշատ և Նեղոց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 99մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 1 սահմանակետին այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում 177մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին: Անտառի եզրի թիվ 2 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով և ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3-4 սահմանակետերով անցնելով 612մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 6-8 սահմանակետերով անցնում 531մ, հասնում թիվ 9

սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 10 սահմանակետով անցնում 337մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվելով հարավ-արևելք, թիվ 12-18 սահմանակետերով անցնելով 1553մ, հասնում է 1752.0մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 20-21 սահմանակետերով անցնելով 1225մ, հասնում ջրբաժանի թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 629մ, հասնում ջրբաժանի թիվ 23 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով թեքվում հարավ-արևելք, թիվ 24-27 սահմանակետերով անցնում 1538 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 28 սահմանակետին, որից հետո անցնելով նույն ուղղությամբ՝ հատում է ձորերը, գագաթներով, թիվ 29-32 սահմանակետերով անցնում 1065մ, հասնում Շնող, Ծաղկաշատ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7766մ է:

ՇՆՈՂ – ՆԵՂՈՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»

Շնող, Նեղոց և Մեծ Այրում համայնքների տարածքների բաժանման Դեբեդ գետի «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 194մ, հասնում ջրբաժանի թիվ 1 սահմանակետին, որից հետո կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, վարելահողերի եզրով անցնելով 561մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դարձյալ վարելահողի եզրով անցնում 305մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև նույն ուղղությամբ դարձյալ վարելահողերի եզրով հատելով դաշտային ճանապարհներ, անցնում է 387մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5-11 սահմանակետերով անցնում 3351մ, հասնում 1579մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 12 սահմանակետին, թիվ 12 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանի վրա գտնվող ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 13-15 սահմանակետերով անցնելով 1032մ, հասնում 1628մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 16 սահմանակետին, որից հետո ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 87մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 462մ, հասնում 1579.4մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 18 սահմանակետին, որտեղից սահմանագիծը

ջրբաժանով անցնում է նույն ուղղությամբ 254մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևմուտք, թիվ 20-21 սահմանակետերով անցնելով 895մ, հասնում Շնող, Նեղոց և Ծաղկաշատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7528 մ է:

ՇՆՈՂ - ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Է»-«Ը»

Դեբեդ գետի ափին գտնվող Շնող, Գոճկան և Մեծ Այրում գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Դեբեդ գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-6 սահմանակետերով անցնելով 1925մ, հասնում Շնող, Մեծ Այրում և Նեղոց գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1925մ է:

ՇՆՈՂ - ԳՈՃԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ը»-«Ա»

Շնող, Գոճկան և Քարկոփ համայնքների տարածքների բաժանման` Դեբեդ գետի ափին գտնվող «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը նշված գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-7 սահմանակետերով անցնելով 2319մ, հասնում Դեբեդ գետի ափին գտնվող Գոճկան, Շնող և Մեծ Այրում գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2319մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՂԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պաղաղբյուր գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Վրաստանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Մեծավան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Դաշտադեն գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Շիրակի մարզին:

ՊԱՂԱՂԲՅՈՒՐ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության պետական սահմանի հետ:

ՊԱՂԱՂԲՅՈՒՐ – ՄԵԾԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Պաղաղբյուր, Մեծավան գյուղական համայնքների և պետական սահմանի (Վրաստանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում Պաղաղբյուր գնացող ճանապարհը, անցնում 503մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, ջրբաժանով անցնում 590մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 531մ, հասնում ջրհավաքի թիվ 3 սահմանակետին, որից հետո թեքվելով դեպի հյուսիս-արևմուտք, անցնում է 646մ, հասնում ջրհավաքի թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ, անցնում 619մ, հասնում ջրհավաքի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, անցնելով թիվ 6-7 սահմանակետերով 1857մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվելով դեպի հարավ-արևելք,

անցնելով թիվ 9-10 սահմանակետերով 826մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում է Պաղաղբյուր, Դաշտադեն և Մեծավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5571մ է:

ՊԱՂԱՂԲՅՈՒՐ – ԴԱՇՏԱԴԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Պաղաղբյուր, Դաշտադեն գյուղական համայնքների և Շիրակի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 375մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 2-49 սահմանակետերով անցնում 12453մ, հասնում թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 457մ, հասնում է թիվ 51 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնելով թիվ 52-53 սահմանակետերով 1245մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում ջրհավաքի թիվ 54 սահմանակետին, ապա թեքվում դեպի հյուսիս-արևելք, անցնում 508մ, հասնում 1831.5մ միջ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 255մ, հասնում թիվ 56 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 631մ, հասնում է թիվ 57 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 58-59 սահմանակետերով անցնում 15745մ, հասնում Պաղաղբյուր, Դաշտադեն և Մեծավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17499մ է:

ՊԱՂԱՂԲՅՈՒՐ – ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ա»

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը հանընկնում է Լոռու և Շիրակի մարզերի սահմանների հետ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Պետրովկա գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Նորաշեն գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Մեղովկա գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Տաշիր քաղաքային համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Միխայելովկա գյուղական համայնքին:

ՊԵՏՐՈՎԿԱ-ՆՈՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Պետրովկա, Նորաշեն և Միխայելովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողի եզրով հատելով դաշտային ճանապարհը, անտառաշերտի և խոտհարքի միջնակով, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 2090մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ, անցնում 771մ, հասնում Մեղովկա, Պետրովկա և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2861մ է :

ՊԵՏՐՈՎԿԱ - ՄԵՂՈՎԿԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Պետրովկա, Մեղովկա և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 751մ, հասնում 1886.5մ միջ ունեցող Սիսյատսկայա եռանկյունաչափական կետի հետ համընկնող Պետրովկա, Մեղովկա գյուղական և Տաշիր քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 751մ է :

ՊԵՏՐՈՎԿԱ - ՏԱՀԻՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Պետրովկա Միխայելովկա գյուղական և Տաշիր քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 600մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 1340մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում է 393մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ջրբաժանով անցնում է 154մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 866մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 1079մ, հասնում է 1886.5մ նիշ ունեցող Սիսյատսկայա եռանկյունաչափական կետի հետ համընկնող Պետրովկա, Մեդովկա գյուղական և Տաշիր քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4434մ է:

ՊԵՏՐՈՎԿԱ - ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Պետրովկա, Նորաշեն և Միխայելովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Ղարաքիլիսա գետով, թիվ 1-35 սահմանակետերով անցնելով 3381մ, հասնում թիվ 36 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 317մ, հասնում թիվ 37 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 313մ, հասնում Պետրովկա, Միխայելովկա գյուղական և Տաշիր քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4011մ է :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պրիվոլնոյե գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Վրաստանի Հանրապետություն), հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կաճաճկուտ գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Հազվի գյուղական համայնքին, «Դ»-«Ե» հատվածով՝ Օձուն գյուղական համայնքին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Ագարակ գյուղական համայնքին, «Զ»-«Է» հատվածով՝ Լեջան գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Սվերդլով գյուղական համայնքին, արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Լեռնահովիտ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Թ»-«Ա» հատվածով՝ Սարչապետ գյուղական համայնքին:

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ - ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության պետական սահմանի հետ:

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ - ԿԱՃԱՃԿՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Պրիվոլնոյե, Կաճաճկուտ և Աքորի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 453մ, հատելով «Գայլի դարպասը», ճանապարհը հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին, որտեղից ջրբաժանով և բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-9 սահմանակետերով անցնում 2075մ, հասնում 1978.0մ նիշ ունեցող Կրեստովայա բարձունքի վրա գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը կրկին բարձունքներով, ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 11-21 սահմանակետերով անցնում

3616մ, հասնում բլրի գագաթին գտնվող Պրիվոլնոյե, Կաճաճկուտ և Աքորի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6144մ է:

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ - ՀԱԳՎԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Պրիվոլնոյե, Հագվի և Կաճաճկուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 156մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, 2-3 սահմանակետերով անցնում 730մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում հարավ-արևմուտք, անցնում 750մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է 509մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7-10 սահմանակետերով անցնում է 1624մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում է 1666մ, հասնում Պրիվոլնոյե, Հագվի և Օձուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5435մ է:

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ - ՕԶՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Պրիվոլնոյե, Օձուն և Հագվի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 806մ, հասնում է Պրիվոլնոյե, Ագարակ և Օձուն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 806մ է:

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ - ԱԳԱՐԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Պրիվոլնոյե, Օձուն և Ագարակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք,

անցնում 552մ, հասնում Պրիվոլնոյե, Ագարակ և Լեջան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ջ» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ջ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 552մ է:

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ - ԼԵՋԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ջ» - «Ե»

Պրիվոլնոյե, Լեջան և Սվերդլով գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 2211մ, հասնում 2140.6մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 159մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 8-10 սահմանակետերով անցնում է 1745մ, հասնում Պրիվոլնոյե, Լեջան և Ագարակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ջ» հանգուցային սահմանակետին:

«Ջ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4115մ է:

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ - ՍՎԵՐԴԼՈՎ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ը»

Պրիվոլնոյե, Սվերդլով և Լեռնահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 200մ, հասնում նույն ճանապարհի եզրի թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, անցնում 183մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թիվ 3-5 սահմանակետերով անցնելով 837մ, հասնում Մեսխանկա գետակի վտակի թիվ 6 սահմանակետին, որից հետո վտակով թեքվում է դեպի հարավ-արևելք, խոտհարքի և վարելահողի եզրով, թիվ 7-25 սահմանակետերով անցնում 2283մ, հասնում Մեսխանկա գետի ափին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը հատելով գետակը, վարելահողի եզրով, թիվ 27 սահմանակետով հատում է Պրիվոլնոյե-Սվերդլով ավտոճանապարհը, անցնում 525մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևելք, անցնում 603մ, հասնում ձորակի եզրի թիվ 29 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 30-39 սահմանակետերով անցնելով 1336մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով, թիվ 42-43 սահմանակետերով անցնելով 448մ, հասնում Պրիվոլնոյե, Սվերդլով և Լեջան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6415մ է:

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ - ԼԵՌՆԱՅՈՎԻՏ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ` «Ը» - «Թ»

Պրիվոլնոյե, Սարչապետ և Լեռնահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 325մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, որից թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով Մեսխանկա գետի վտակը, դաշտային ճանապարհը, թիվ 2 սահմանակետով անցնում 1308մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 650մ, ջրհավաքով հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 392մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 457մ, հասնում 1833.4մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին, այնուհետև նույն ուղղությամբ անցնում է 348մ, հատելով Պրիվոլնոյե գնացող խճուղային ճանապարհը, հասնում Պրիվոլնոյե, Լեռնահովիտ և Սվերդլով գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը» - «Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3480մ է:

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ - ՍԱՐՉԱՊԵՏ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ` «Թ» - «Ա»

Պրիվոլնոյե, Սարչապետ գյուղական համայնքների և պետական սահմանի (Վրաստանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 421մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև հատելով դաշտային ճանապարհը, Մեսխանկա գետակը, անցնելով 945 մ, հասնում է բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ անցնելով 567մ, հասնում բլրի գագաթի թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 4-5 սահմանակետերով անցնելով 1408մ, հատելով Մեսխանկա գետը, Պրիվոլնոյե գնացող ճանապարհը, վարելահողի և խոտհարքի եզրով հասնում դաշտային ճանապարհի

եզրի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 735մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 7 սահմանակետին: Այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 783մ, վարելահողի եզրով հասնում Պրիվոլնոյե, Լեռնահովիտ և Սարչապետ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4859մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊՈՒՇԿԻՆՈ ԳՅՈՒՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պուշկինո գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ստեփանավան քաղաքային և «Բ»-«Գ» հատվածով՝ Ամրակից գյուղական համայնքներին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Գարգառ և «Դ»-«Ե» հատվածով՝ Ազնվածոր գյուղական համայնքներին, հարավից՝ «Ե»-«Զ» հատվածով՝ Արջուտ, «Զ»-«Է» հատվածով՝ Նոր Խաչակապ, «Է»-«Ը» հատվածով՝ Արևաշող, «Ը»-«Թ» հատվածով՝ Շենավան և «Թ»-«Ժ» հատվածով՝ Սարահարթ գյուղական համայնքներին, արևմուտքից «Ժ»-«Ա» հատվածով՝ Ուրասար գյուղական համայնքին:

ՊՈՒՇԿԻՆՈ – ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Պուշկինո, Ուրասար գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 546մ, հատելով գետակի վտակը, հասնում լանջի թիվ 1 սահմանակետին, այնուհետև շարունակվում նույն ուղղությամբ, թիվ 2 սահմանակետով անցնելով 325մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 4 սահմանակետով անցնելով 471մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջի թիվ 6-7 սահմանակետերով անցնելով 1079մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը նույն ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 476մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 781մ, հասնում ջրբաժանի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 1093մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը անտառային հողերի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 12-18 սահմանակետերով անցնում 1900մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը

թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, անտառի եզրագծով, թիվ 20-27 սահմանակետերով անցնում 1824մ, հասնում 1838.0մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 28 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 234 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 373մ, հասնում թիվ 30 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 251մ, հասնում հատուկ նշանակության հողերի եզրագծին գտնվող թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 347մ, հասնում հատուկ նշանակության հողերի եզրագծին գտնվող թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 33-34 սահմանակետերով անցնում 1357մ, հասնում սրտաբանական կենտրոնի նոտ գտնվող թիվ 35 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա արևելք, շրջանցելով սրտաբանական կենտրոնի տարածքը, թիվ 36 սահմանակետով անցնում է 299մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 791մ, հասնում վարելահողի եզրին գտնվող թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք վարելահողի եզրով, ֆիզիկայի ինստիտուտի տարածքի հարավային մասով անցնում 547մ, հասնում վարելահողի եզրին գտնվող թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 598մ, հատելով ճանապարհը, հասնում Պուշկինո, Ամրակից գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13291մ է:

ՊՈՒՇԿԻՆՈ - ԱՄՐԱԿԻՑ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Պուշկինո, Ամրակից գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 476մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 387մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 928մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 750մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք, 8-10 սահմանակետերով

անցնում 878մ, հասնում Պուշկինո, Ամրակից և Գարգառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3419մ է:

ՊՈՒՇԿԻՆՈ - ԳԱՐԳԱՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Պուշկինո, Ամրակից և Գարգառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 1 սահմանակետով անցնում 520մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անցնում 619մ, հասնում Գերգերկա գետի ափին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 684մ, հասնում Գարգառ համայնքի տնամերձերի եզրի թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1227մ, հասնում Պուշկինո գնացող դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը նշված ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 75մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 900մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Գերգերկա գետի վտակը, թիվ 8-9 սահմանակետերով անցնում 1189մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք թիվ 11 սահմանակետով անցնում 442մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով անցնում 3201մ, հասնում Պուշկինո, Ազնվածոր և Գարգառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8856մ է:

ՊՈՒՇԿԻՆՈ - ԱԶՆՎԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Պուշկինո, Ազնվածոր և Գարգառ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 54մ, հասնում է Պուշկինո, Ազնվածոր և Արջուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 54մ է:

ՊՈՒՇԿԻՆՈ - ԱՐՋՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ձ»

Բազումի լեռնաշղթայի վրա գտնվող Պուշկինո, Նոր Խաչակապ և Արջուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք, անցնելով 2539մ, հասնում բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին, որտեղից նույն ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1227մ, հասնում թանբի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնելով 395մ, հասնում 2568.0մ միջ ունեցող բլրի գագաթի թիվ 3 սահմանակետին, որից հետո թեքվում դեպի հարավ-արևելք, անցնում 625մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 469մ, հասնում ջրբաժանի թիվ 5 սահմանակետին, որտեղից նույն ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 439մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 397մ, հասնում 2796.2մ միջ ունեցող Բզովդալ բարձունքի թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 483մ, հասնում է Պուշկինո, Արջուտ և Ազնվածոր համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ձ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6574մ է:

ՊՈՒՇԿԻՆՈ - ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ»-«Ե»

Պուշկինո, Արևաշող և Նոր Խաչակապ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 602մ, հասնում Պուշկինո, Արջուտ և Նոր Խաչակապ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 602մ է:

ՊՈՒՇԿԻՆՈ - ԱՐԵՎԱՇՈՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ը»

Պուշկինո, Շենավան և Արևաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը 2836.5մ միջ ունեցող Նիշտեպե բարձունքից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-7 ջրբաժանով անցնում 385մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև Բզովդալի լեռնաշղթայով թեքվում է դեպի հարավ-

արևելք, ջրբաժանի թիվ 9-42 սահմանակետերով անցնելով 2228մ, հասնում 2650.2մ նիշ ունեցող Պուշկինո, Արևաշող և Նոր Խաչակապ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2612մ է:

ՊՈՒՇԿԻՆՈ - ՇԵՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ը»-«Թ»

Պուշկինո, Սարահարթ և Շենավան գյուղական համայնքների տարածքների բաժանման` բլրի գագաթի «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-17 սահմանակետերով անցնում 1001մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 18-34 սահմանակետերով անցնելով 1547մ, հասնում 2837մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Պուշկինո, Շենավան և Արևաշող գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը» - «Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2548մ է:

ՊՈՒՇԿԻՆՈ - ՍԱՐԱՀԱՐԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Թ»-«Ժ»

2836մ նիշ ունեցող «Շիշտեպե» բարձունքի վրա գտնվող Պուշկինո, Ուրասար և Սարահարթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 1-3 սահմանակետերով անցնելով 177մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում 2739.2մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թամբի թիվ 5-9 սահմանակետերով անցնում 437մ, հասնում է բլրի գագաթի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով թամբը, անցնելով թիվ 11-14 սահմանակետերով 390մ, ջրբաժանով հասնում 2747.0մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 15 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 16 սահմանակետով անցնում 199մ, հասնում Պուշկինո, Շենավան և Սարահարթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1201մ է:

ՊՈՒՇԿԻՆՈ – ՈՒՐԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ժ»-«Ա»

Պուշկինո, Ուրասար գյուղական և Ստեփանավան քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-18 սահմանակետերով անցնում 5819մ, հասնում 2836մ նիշ ունեցող «Շիշտեպե» բարձունքի վրա գտնվող Պուշկինո, Ուրասար և Սարահարթ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետին:

«Ժ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5819 մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԻԼԻԶԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Զիլիզա գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Վրաստանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Շամլուղ քաղաքային համայնքին, հարավից և արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Աքորի գյուղական համայնքին:

**ԶԻԼԻԶԱ - ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանրակցում է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության պետական սահմանի հետ:

ԶԻԼԻԶԱ - ՇԱՄԼՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Զիլիզա գյուղական, Շամլուղ քաղաքային համայնքների և պետական սահմանի (Վրաստանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 103մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևելք, ապա արևմուտք և տեղանքի բարդ կտրտվածքներով, անտառի եզրով, թիվ 2-19 սահմանակետերով անցնում 2533մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անտառի եզրով, թիվ 21-38 սահմանակետերով անցնում 5223մ, հասնում թիվ 39 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 40-41 սահմանակետերով անցնում 801մ, ջրբաժանով հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից ջրբաժանով նույն ուղղությամբ թիվ 43-47 սահմանակետերով անցնում է 1548մ, հասնում է անտառի եզրի թիվ 48 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, նորից անտառի եզրով, թիվ 49-

51 սահմանակետերով անցնում 1400մ, հասնում Ջիլիզա, Աքորի գյուղական և Շամլուղ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11608 մ է:

ՋԻԼԻԶԱ - ԱՔՈՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»

Ջիլիզա, Աքորի գյուղական համայնքների և պետական սահմանի (Վրաստանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը անտառի միջի ձորով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1759մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնում 2096մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից անտառի եզրագծի ոլորաններով, թիվ 7-10 սահմանակետերով անցնում է 17772մ, հասնում Աքորի, Ջիլիզա գյուղական և Ալավերդի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 21627մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սարալանջ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լուսաղբյուր գյուղական համայնքին, արևելքից, հարավից և արևմուտքից «Բ»-«Ա» հատվածով՝ Մեծ Պարնի գյուղական համայնքին:

ՍԱՐԱԼԱՆՋ – ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

2379.8մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող Սարալանջ, Մեծ Պարնի և Լուսաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1572մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 363մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 193մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 7 սահմանակետով անցնում 613մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1003մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևմուտք, անցնելով 269մ, հասնում 2232.9մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Սարալանջ, Լուսաղբյուր և Մեծ Պարնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4012մ է:

ՍԱՐԱԼԱՆՋ – ՄԵԾ ՊԱՐՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Ա»

2379.8մ նիշ ունեցող բարձունքի վրա գտնվող Սարալանջ, Մեծ Պարնի և Լուսաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային

սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 1-2 սահմանակետերով անցնելով 1072մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 388մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև նույն ուղղությամբ անցնում է 170մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 200մ, հասնում 2274.8մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 357մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 483մ, հասնում 2041.7մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում է 548մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա շարունակվում է նույն ուղղությամբ, ջրբաժանով անցնում 232մ, հասնում բլրի գագաթի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 248մ, հասնում 1822.5մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում 155մ, հասնում ջրհավաքի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, վարելահողի միջնակով, թիվ 13 սահմանակետով հատելով Նալբանդի ջրանցքը, անցնելով 854մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անտառաշերտի և Մեծ Պարնի բնակավայրի եզրով հատելով երկաթգիծը, անցնելով 628մ, հասնում Գյումրի-Սպիտակ միջպետական ավտոճանապարհի վրա գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 16-17 սահմանակետերով անցնելով 1920մ, հասնում ավտոճանապարհի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, վարելահողի և անտառաշերտի եզրով անցնելով 225մ, հասնում թիվ 19 սահմանակետին, որից հետո շարունակվում է նույն ուղղությամբ, հատելով Նալբանդի ջրանցքը, այնուհետև երկաթգիծը, անցնելով 123մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը ջրահավաքով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 21-22 սահմանակետերով անցնելով 1189մ, հասնում թիվ 23 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով անցնելով 872մ, հասնում բլրի գագաթի թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 432մ, հասնում 2044.6մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 27

սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, ջրբաժանով, թիվ 28-29 սահմանակետերով անցնելով 1191մ, հասնում է 2232.9մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող Սարալանջ, Մեծ Պարնի և Լուսաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11217մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀԱՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սարահարթ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում :

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Պուլշկինո գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Շենավան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Սպիտակ քաղաքային և «Դ»-«Ե» հատվածով՝ Գեղասար գյուղական համայնքներին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Գոգարան գյուղական համայնքին, հյուսիսից «Զ»-«Ա» հատվածով՝ Ուրասր գյուղական համայնքին:

ՍԱՐԱՀԱՐԹ – ՊՈՒՇԿԻՆՈ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

2836 մ նիշ ունեցող «Շիշտեպե» բարձունքի վրա գտնվող Սարահարթ, Ուրասար և Պուլշկինո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 1-3 սահմանակետերով անցնելով 177մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում 2739.2մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թամբի թիվ 5-9 սահմանակետերով անցնում 437մ, հասնում է բլրի գագաթի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով թամբը, անցնելով թիվ 11-14 սահմանակետերով 390մ, ջրբաժանով հասնում 2747.0մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 15 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևելք, թիվ 16 սահմանակետով անցնում 199մ, հասնում Սարահարթ, Շենավան և Պուլշկինո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1201մ է:

ՍԱՐԱՀԱՐԹ – ՇԵՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Սարահարթ, Շենավան և Պուլշկինո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-

արևմուտք, անցնում թիվ 1-6 սահմանակետերով 775մ, հասնում Փամբակ գետի ափին գտնվող թիվ 7 սահմանակետին, որտեղից սահմանագիծը Փամբակ գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8-29 սահմանակետերով անցնելով 1658մ, հասնում Փամբակ գետի ափին գտնվող թիվ 30 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ ապա հարավ-արևմուտք, թիվ 31-46 սահմանակետերով անցնում 2292մ, հասնում թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 48-50 սահմանակետերով անցնում 2284մ, հասնում Ժայռի եզրին գտնվող թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 52 սահմանակետով, դաշտային ճանապարհի եզրով անցնում է 1341մ, հասնում է թիվ 53 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է 638մ, հասնում թիվ 54 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, անցնում 180մ, հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 869մ, հասնում է բլրի գագաթին գտնվող թիվ 56 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, հատելով բարձունքներ, առուններ, դաշտային ճանապարհով, թիվ 57-63 սահմանակետերով անցնում է 3235մ, հասնում է թիվ 64 սահմանակետին: Թիվ 64 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 65-66 սահմանակետերով անցնում 502 մ, հասնում ջրբաժանի թիվ 67 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք թիվ 68 սահմանակետով անցնում 820մ, հասնում է թիվ 69 սահմանակետին, ապա ջրբաժանով թեքվելով հարավ-արևելք, անցնում է 310մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող Սարահարթ, Շենավան գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14902մ է:

ՍԱՐԱՀԱՐԹ – ՍՊԻՏԱԿ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ`«Գ»-«Դ»

Սարահարթ, Գեղասար գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 897մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնելով 192մ, հատելով երկաթգիծը, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն

ուղղությամբ, անցնում 172մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող Սարահարթ, Շենավան գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1261մ է:

ՍԱՐԱՀԱՐԹ - ԳԵՂԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ`«Դ»-«Ե»

Սարահարթ, Գոգարան և Գեղասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Փամբակ գետի վտակով թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնելով 1048մ, հասնում է Փամբակ գետի ձախ ափին գտնվող թիվ 6 սահմանակետին, այնուհետև Փամբակ գետով շարունակվում դեպի հյուսիս-արևելք, թիվ 7-11 սահմանակետերով անցնելով 1129մ, հասնում Փամբակ գետի թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը, կտրուկ փոխելով ուղղությունը դեպի հարավ-արևմուտք, ջրհավաքով անցնելով 137մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ-արևելք, անցնում 150մ, հասնում է Սարահարթ, Գեղասար գյուղական և Սպիտակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2464մ է:

ՍԱՐԱՀԱՐԹ - ԳՈԳԱՐԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ`«Ե»-«Զ»

Սարահարթ, Գոգարան և Ուրասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրհավաքով, թիվ 1-20 սահմանակետերով անցնելով 1412 մ, հասնում ջրհավաքի թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրհավաքի թիվ 22 սահմանակետով անցնելով 1712մ, հասնում 1871.4մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 23 սահմանակետին, այնուհետև նույն ջրհավաքով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 24 սահմանակետով անցնում 250մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 26-34 սահմանակետերով անցնում 1478մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 26-37 սահմանակետերով անցնում 1073մ, հասնում ջրբաժանի թիվ 38 սահմանակետին, որից

հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Գոգարան գնացող ավտոճանապարհը, թիվ 39-47 սահմանակետերով անցնելով 4056մ, հասնում թիվ 48 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 130մ, հասնում թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 50-66 սահմանակետերով, ջրհավաքով անցնելով 3109մ, հասնում երկու ձորակների միացման տեղում գտնվող թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 68-71 սահմանակետերով անցնելով 822մ, հասնում ձորակում գտնվող Սարահարթ, Գոգարան և Գեղասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14044մ է:

ՍԱՐԱՀԱՐԹ – ՈՒՐԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ`«Զ»-«Ա»

2836.0մ միջ ունեցող «Շիշտեպե» բարձունքի վրա գտնվող Սարահարթ, Ուրասար և Պուշկինո գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 1-21 սահմանակետերով անցնում 1501մ, հասնում ջրբաժանի Սարահարթ, Ուրասար և Գոգարան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1501մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՎԵՐԴԼՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սվերդլով գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Պրիվոլնոյե գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Լեջան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ուռուտ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Մեդովկա գյուղական համայնքին, «Ե»-«Ա» հատվածով՝ Լեռնահովիտ գյուղական համայնքին:

ՍՎԵՐԴԼՈՎ - ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Սվերդլով, Լեռնահովիտ և Պրիվոլնոյե գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 200մ, հասնում նույն ճանապարհի եզրի թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ, անցնում 183մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թիվ 3-5 սահմանակետերով անցնելով 837մ, հասնում Մեսխանկա գետակի վտակի թիվ 6 սահմանակետին, որից հետո վտակով թեքվում է դեպի հարավ-արևելք, խոտհարքի և վարելահողի եզրով, թիվ 7-25 սահմանակետերով անցնում 2283մ, հասնում Մեսխանկա գետի ափին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը, հատելով գետակը, վարելահողի եզրով, թիվ 27 սահմանակետով հատում է Պրիվոլնոյե-Սվերդլով ավտոճանապարհը, անցնում 525մ, հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևելք, անցնում 603մ, հասնում ձորակի եզրի թիվ 29 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 30-39 սահմանակետերով անցնելով 1336մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակով, թիվ 42-43 սահմանակետերով անցնելով 448մ, հասնում Սվերդլով, Պրիվոլնոյե և Լեջան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6415մ է:

ՍՎԵՐՂԼՈՎ – ԼԵՋԱՆ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Սվերղլով, Պրիվոլնոյե և Լեջան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով, թիվ 1-8 սահմանակետերով անցնելով 1560մ, հասնում 1905.4մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 10-14 սահմանակետերով անցնելով 3682մ, հասնում Սվերղլով, Լեջան և Ուռուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման 2294.1մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5242մ է:

ՍՎԵՐՂԼՈՎ – ՈՒՌՈՒՏ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Սվերղլով, Մեդովկա և Ուռուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը վարելահողի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 272մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 2-6 սահմանակետերով անցնում 2502մ, հասնում դաշտային ճանապարհի եզրի թիվ 7 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ հատելով դաշտային ճանապարհը, վարելահողի եզրով անցնելով 595մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևելք, թիվ 9 սահմանակետով հատելով Սվերղլով–Ուռուտ խճուղային ճանապարհը, անցնում 708մ, հասնում վարելահողի եզրի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 25մ, վարելահողի եզրով հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 12 սահմանակետով անցնում 1478մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 872մ, հասնում հատուկ նշանակության հողերի եզրագծի և ջրբաժանի թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը նշված ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 842մ, հասնում Սվերղլով, Ուռուտ և Լեջան գյուղական համայնքների տարածքների բաժանման 2294.1մ նիշ ունեցող բլրի գագաթի «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7294մ է:

ՍՎԵՐՂԼՈՎ – ՄԵՂՈՎԿԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Սվերդլով, Մեղովկա և Լեռնահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Հայդարբեկ բարձունքից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 199մ, հասնում ջրբաժանի թիվ 1 սահմանակետին, այնուհետև խոտհարքի և արոտի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 905մ, հասնում 1683.0մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 204մ, հասնում վարելահողի և խոտհարքի եզրի թիվ 3 սահմանակետին, որտեղից նույն ուղղությամբ հատելով դաշտային ճանապարհը, վարելահողի եզրով անցնելով 574մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում 213մ, հասնում ձորակի եզրի թիվ 5 սահմանակետին, այնուհետև վարելահողի եզրով հատելով դաշտային ճանապարհը, անցնելով 296մ, հասնում է ջրհավաքի Սվերդլով, Ուռուտ և Մեղովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2394մ է :

ՍՎԵՐՂԼՈՎ – ԼԵՌՆԱՀՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ա»

Սվերդլով, Լեռնահովիտ և Պրիվոլնոյե գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Տաշիր-Պրիվոլնոյե ավտոճանապարհի եզրից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 346մ, հասնում բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին, այնուհետև ջրբաժանով նույն ուղղությամբ անցնում է 418մ, հասնում 1894մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, հատելով փոքրիկ ձորակը, անտառաշերտի եզրով, բլրի գագաթով, ջրբաժանի թիվ 3-5 սահմանակետերով անցնելով 1088մ, հասնում է խոտհարքի և անտառի եզրի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 536մ, հասնում 1806.5մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառաշերտի և արոտի եզրի թիվ 8 սահմանակետով անցնում 1121մ, հատելով երկու դաշտային ճանապարհները, հասնում 1921.0մ նիշ ունեցող Հայդարբեկ բարձունքի Սվերդլով, Լեռնահովիտ և Մեղովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3509մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՅԱԳՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վահագնաձոր գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից, արևելքից և հարավից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վահագնի գյուղական համայնքին, արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գուգարք, «Գ»-«Դ» հատվածով՝ Փամբակ և «Դ»-«Ա» հատվածով՝ Քարաբերդ գյուղական համայնքերին:

ՎԱՅԱԳՆԱԶՈՐ – ՎԱՅԱԳՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Վահագնաձոր, Վահագնի և Քարաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյուսիս, ապա հարավ-արևելք, անցնում 2486մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից մերթնդներթ թեքվում է դեպի հարավ-արևելք և հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 2-5 սահմանակետերով անցնելով 1096մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 132մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից անտառի եզրով թեքվում է հարավ-արևելք, անցնում 410մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում 145մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, անցնում 145 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 487մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 12-13 սահմանակետերով անցնելով 721մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 193մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հյուսիս, թիվ 16-18 սահմանակետերով անցնելով 702մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 20-22 սահմանակետերով անցնելով 839մ, հատելով երկաթգիծը, Փամբակ գետը, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը Փամբակ գետով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 148մ,

հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնում 3332մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 29-44 սահմանակետերով անցնում 2543մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 45 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 938մ, հասնում Վահագնաձոր, Վահագնի և Գուգարք գյուղական համայնքների տարածաշրջանների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14319մ է:

ՎԱՀԱԳՆԱԶՈՐ – ԳՈՒԳԱՐՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Վահագնաձոր, Գուգարք և Փամբակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-30 սահմանակետերով անցնում 2030մ, հասնում Վահագնաձոր, Վահագնի և Գուգարք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2030մ է:

ՎԱՀԱԳՆԱԶՈՐ – ՓԱՄԲԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Վահագնաձոր, Քարաբերդ և Փամբակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում է 2468մ, հասնում գետի և ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում դեպի հարավ, անցնում 246մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, ճանապարհով, թիվ 3-7 սահմանակետերով, գետի եզրագծով անցնում 1351մ, հասնում Վահագնաձոր, Փամբակ և Գուգարք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4066մ է:

ՎԱՀԱԳՆԱԶՈՐ – ՔԱՐԱՔԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Վահագնաձոր, Քարաքերդ և Վահագնի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-24 սահմանակետերով, անտառով անցնում է 1760մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը անտառով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 26-28 սահմանակետերով անցնում 284մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 30-38 սահմանակետերով անցնում 649 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 339մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 41-42 սահմանակետերով անցնում 528մ, հասնում Վահագնաձոր, Քարաքերդ և Փամբակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3560մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՅԱԳՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վահագնի գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ձորագյուղ, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ձորագետ, «Գ»-«Դ» հատվածով՝ Եղեգնուտ և «Դ»-«Ե» հատվածով՝ Մարգահովիտ գյուղական համայնքներին, հարավից և արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Գուգարք գյուղական համայնքին, հարավից «Զ»-«Է» հատվածով՝ Վահագնաձոր և «Է»-«Ը» հատվածով՝ Քարաբերդ գյուղական համայնքներին, արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Բազում և «Թ»-«Ժ» հատվածով՝ Գյուլագարակ գյուղական համայնքներին, հյուսիսից «Ժ»-«Ի» հատվածով՝ Հոբարձի և «Ի»-«Ա» հատվածով՝ Անտառամուտ գյուղական համայնքներին:

ՎԱՅԱԳՆԻ - ՁՈՐԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

Վահագնի, Անտառամուտ և Ձորագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակները, անտառի եզրով, ջրբաժանի թիվ 1 սահմանակետով անցնելով 930մ, հասնում է 1332.9մ նիշ ունեցող լեռնագագաթի թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 429մ, հասնում ջրհավաքի, թիվ 3 սահմանակետին, որից հետո շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում 533մ, հասնում 1252.3մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորակը, անցնելով 427մ, հասնում բլրի գագաթի թիվ 5 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 455մ, հասնում ջրբաժանի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 294 մ, հասնում ժայռի վրա գտնվող թիվ 7 սահմանակետին, այդտեղից թեքվում է հյուսիս-արևելք, հատելով ճանապարհը, վարելահողի եզրով անցնելով 485մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, հատում ճանապարհը, անցնում 620մ,

հասնում Դեբեդ գետի ափին գտնվող Վահագնի, Ձորագյուղ և Ձորագետ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4174մ է:

ՎԱՅԱԳՆԻ - ՁՈՐԱԳԵՏ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»

Դեբեդ գետի ափին գտնվող Վահագնի, Ձորագյուղ և Ձորագետ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Դեբեդ գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 111մ, հասնում Վահագնի, Ձորագյուղ և Եղեգնուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ» - «Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 111մ է:

ՎԱՅԱԳՆԻ - ԵՂԵԳՆՈՒՏ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»

Դեբեդ գետի ափին գտնվող Վահագնի, Եղեգնուտ և Ձորագետ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Դեբեդ գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-24 սահմանակետերով անցնելով 5499մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրով, թիվ 26 սահմանակետով անցնելով 3235մ, հասնում է թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 28-36 սահմանակետերով անցնելով 3147մ, հասնում թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 373մ, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 373մ, հասնում Վահագնի, Եղեգնուտ և Մարգահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12252մ է:

ՎԱՅԱԳՆԻ – ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՍԱՅՍԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»

Վահագնի, Մարգահովիտ և Եղեգնուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը անտառով թեքվում է դեպի

հարավ-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1147մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը անտառով թեքվում է դեպի հարավ, թիվ 4 սահմանակետով անցնում 1169մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ, անտառով անցնում 718մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը անտառով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա թիվ 7 սահմանակետով անցնում 1207մ, հասնում Վահագնի, Մարգահովիտ և Գուգարք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4242մ է:

ՎԱՅԱԳՆԻ - ԳՈՒԳԱՐՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Զ»

Վահագնի, Գուգարք և Վահագնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 3599մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 49 մ, հասնում ձորի սկզբին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորի ոլորաններով, թիվ 6-42 սահմանակետերով անցնում 2360մ, հասնում թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ջրբաժանով անցնում 1614մ, հասնում Վահագնի, Գուգարք և Մարգահովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7621մ է:

ՎԱՅԱԳՆԻ – ՎԱՅԱԳՆԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ» - «Է»

Վահագնի, Վահագնաձոր և Քարաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյուսիս, ապա հարավ-արևելք, անցնում 2486մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից մերթնդներթ թեքվում է դեպի հարավ-արևելք և հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 2-5 սահմանակետերով անցնելով 1096մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 132մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից անտառի եզրով թեքվում է հարավ-արևելք, անցնում 410մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում

145 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, անցնում 145մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 487մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 12-13 սահմանակետերով անցնելով 721մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 193մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հյուսիս, թիվ 16-18 սահմանակետերով անցնելով 702մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 20-22 սահմանակետերով անցնելով 839մ, հատելով երկաթգիծը, Փամբակ գետը, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը Փամբակ գետով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 148մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 27 սահմանակետով անցնում 3332մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 29-44 սահմանակետերով անցնում 2543մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 45 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 938մ, հասնում Վահագնի, Վահագնաձոր և Գուգարք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14319մ է:

ՎԱՀԱԳՆԻ – ՔԱՐԱՔԵՐՂ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Է» - «Ը»

Վահագնի, Քարաքերղ և Վահագնաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 157մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3-7 սահմանակետերով անցնելով 777մ, հասնում ջրբաժանի թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ, անցնելով 84 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10-12 սահմանակետերով անցնում 1282մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրագծով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ

14-15 սահմանակետերով անցնում է 707մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում է 378մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք թիվ 18-20 սահմանակետերով հատում է երկաթգիծը, Փամբակ գետը, անցնում 1732մ, հասնում է Վահագնի, Քարաբերդ և Բազում գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Է» - «Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5117մ է:

ՎԱՀԱԳՆԻ – ԲԱԶՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը» - «Թ»

Վահագնի, Գյուլագարակ և Բազում գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում ջրբաժանով և անտառի եզրով 1152մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ջրհավաքով, թիվ 4 սահմանակետով անցնում 360մ, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, այնուհետև թիվ 5 սահմանակետից թեքվում դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, ժայռի եզրագծով, թիվ 6-18 սահմանակետերով սահմանագիծը անցնում է 1020մ, հասնում թիվ 19 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով, թիվ 20-22 սահմանակետերով անցնում 1994մ, հասնում բլրի գագաթի Վահագնի, Բազում և Քարաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը» - «Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4524մ է:

ՎԱՀԱԳՆԻ – ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ» - «Ժ»

Վահագնի, Գյուլագարակ և Հոբարձի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 197մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 324մ, հասնում 1611.0մ նիշ ունեցող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 298մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, ջրբաժանի թիվ 4-5 սահմանակետերով անցնում 1310մ, հասնում

նախկին ջրամբարի տարածքի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով Գարգառ-Գյուլագարակ ավտոճանապարհը, անցնում 36մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, անցնում 133մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 173մ, հասնում Վահագնի, Գյուլագարակ և Բազում գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2471մ է:

ՎԱՀԱԳՆԻ – ՀՈՐԲԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱԿԵՏԸ՝ «Ժ» - «Ի»

Վահագնի, Հորբարձի և Անտառամուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ի» հանգուցային սահմանակետից սահմանագիծը անտառային հողերի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1102մ, հասնում Վահագնի, Հորբարձի և Գյուլագարակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետին:

«Ժ»-«Ի» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1102մ է:

ՎԱՀԱԳՆԻ – ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԿԵՏԸ՝ «Ի» - «Ա»

Վահագնի, Անտառամուտ և Չորագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 438մ, հասնում 1375.1մ նիշ ունեցող բլրի գագաթի թիվ 1 սահմանակետին, ապա շարունակվելով նույն ուղղությամբ, հատելով ձորակը, անցնում 498մ, հասնում բլրի գագաթի թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 85մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, ճանապարհի և բնակավայրի եզրով, թիվ 4-5 սահմանակետերով անցնելով 1274մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 187մ, հասնում թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8 սահմանակետով անցնում 364մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնելով 113մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որից

հետո կտրուկ թեքվում է արևելք, անցնում 543մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 12-13 սահմանակետերով, անտառամիջի ձորակով անցնում 5359մ, հասնում թիվ 14 սահմանակետին, այստեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, ձորով, թիվ 14-24 սահմանակետերով անցնում 1486մ, հասնում Վահագնի, Անտառամուտ և Յոբարծի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ի» հանգուցային սահմանակետին:

«Ի»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10350մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վարդաբլուր գյուղական համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Յաղդան գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կողես և «Գ»-«Դ» հատվածով՝ Կուրթան գյուղական համայնքներին, արևելքից և հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Անտառամուտ գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Հոբարձի և «Զ»-«Ա» հատվածով՝ Գյուլագարակ գյուղական համայնքներին:

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ- ՅԱՂԴԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Վարդաբլուր, Գյուլագարակ և Յաղդան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Ձորագետ գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-8 սահմանակետերով անցնելով 2368մ, հասնում Վարդաբլուր, Կողես և Յաղդան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2368մ է:

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ- ԿՈՂԵՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Վարդաբլուր, Յաղդան և Կողես գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Ձորագետ գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-7 սահմանակետերով անցնելով 1723մ, հասնում Ձորագետ գետի ափին գտնվող Վարդաբլուր, Կուրթան և Կողես գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1723մ է:

ՎԱՐՂԱԲԼՈՒՐ- ԿՈՒՐԹԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Վարդաբլուր, Կողես և Կուրթան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ձորագետ գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, վարելահողի եզրով անցնելով 435մ, հասնում թիվ 1 սահմանակետին, այնուհետև վարելահողի և անտառաշերտի եզրով թեքվում է դեպի հարավ, անցնում 969մ, հասնում տնամերձի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի արևելք, անցնելով վարելահողի և խոտհարքի եզրով, թիվ 3 սահմանակետով 143մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը շրջանցելով տնամերձը, թեքվում է դեպի հարավ, անցնում 57մ, հասնում թիվ 5 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի արևմուտք, անցնում 49մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ, անցնում 37մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևելք, անցնում 29մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 55մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի հարավ-արևմուտք, անցնում 52մ, հասնում Գերգերկա գետակի ափին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 240մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, վարելահողի եզրով անցնում 731մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այնուհետև շարունակվելով նույն ուղղությամբ, անցնելով 544մ, հասնում Գերգերկա գետակի վտակի ափին գտնվող թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, վտակով, թիվ 14-37 սահմանակետերով անցնելով 1290մ, հասնում թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 334մ, հասնում Գերգերկա գետի թիվ 39 սահմանակետին, այնուհետև նույն վտակով շարունակվում դեպի հարավ-արևմուտք, անցնում 686մ, հասնում թիվ 40 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ, անցնում 329մ, հասնում թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 42 սահմանակետով անցնում 689մ, հասնում բլրի գագաթի թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է անտառային հողերի եզրագծով 1154մ, հասնում թիվ 44 սահմանակետին, ապա ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 45-54 սահմանակետերով անցնում 758մ, հասնում վտակի ափին գտնվող թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը վտակով թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 132մ, հասնում Վարդաբլուր, Կուրթան և

Անտառամուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8712մ է:

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ- ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Վարդաբլուր, Անտառամուտ և Կուրթան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 405մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է արևմուտք, անցնում 75մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 1817մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնում 649մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 8-9 սահմանակետերով անցնում 1140մ, հասնում թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնելով 128մ, հասնում Վարդաբլուր, Անտառամուտ և Հոբարձի համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4213մ է:

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ- ՀՈԲԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Վարդաբլուր, Հոբարձի և Գյուլագարակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 547մ, հատելով դաշտային ճանապարհը, խճուղային ճանապարհը, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև նույն ուղղությամբ անցնելով 331մ, հատելով ձորակը, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի արևելք, անցնելով 502մ, հասնում է վարելահողի եզրի թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում վարելահողերի միջնակով, արոտավայրի եզրով 350մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև շրջանցելով սեպածև վարելահողը, թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 129մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվելով դեպի հարավ, անցնելով 101մ, հասնում է Վարդաբլուր գնացող ճանապարհի եզրի թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 111մ, հասնում վարելահողի և ճանապարհի

եզրի թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը ջրհավաքով թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնելով թիվ 8-13 սահմանակետերով 1879մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 219մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, դաշտային ճանապարհի և վարելահողի եզրով անցնելով 178մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, վարելահողի եզրով անցնելով 99մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը, անցնում է 379մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևելք և անցնելով 121մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 808մ, հասնում է 1808մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը անտառային հողերի եզրագծով թեքվում է դեպի արևելք, անցնում 104մ, հասնում է թիվ 21 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, ապա ձորով, թիվ 22-42 սահմանակետերով անցնում 3414մ, հասնում Վարդաբլուր, Անտառամուտ և Հոբարձի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9273մ է:

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ- ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ` «Զ»-«Ա»

Վարդաբլուր, Գյուլագարակ և Յաղդան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, Ձորագետ գետով, վարելահողի եզրով հատելով դաշտային ճանապարհը, Կիրովի ջրանցքը, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 2176մ, հասնում է Խոտհարքի և վարելահողի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևելք, անցնում է 157մ, հասնում 1435.7մ նիշ ունեցող եռանկյունաչափական թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հատելով դաշտային ճանապարհը, անցնում 197մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 378մ, հասնում Վարդաբլուր, Գյուլագարակ և Հոբարձի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2907մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՌԻՐԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուրասար գյուղական համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ստեփանավան քաղաքային համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Պուշկինո գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Սարահարթ, «Դ»-«Ե» հատվածով Գոգարան և «Ե»-«Զ» հատվածով՝ Մեծ Պարնի գյուղական համայնքներին, հյուսիսից և արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Կաթնաղբյուր գյուղական համայնքին:

ՌԻՐԱՍԱՐ – ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»

